

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 23.02.2022թ. չորեքշաբթի թիվ 9 (1034)

Փետրվար

Մայիսը հաղթանակների ամիս է: Փետրվարը միշտ նախորդում է մայիսին, եւ հաղթանակներին նախորդում են **զարթոնքները**:

Փետրվարը զարթոնքի՝ ամիս է: **1988-ի փետրվարի 20-ին** սկսված **Արցախյան շարժումը** հաշված օրերի ընթացքում վերածվեց **համազգային** շարժման, եւ սկզբնավորվեց ազգային ազատագրական պայքարի նորագույն՝ **հաղթական** փուլը: Բնականաբար, ոսոխը կրկին ելավ մեր դեմ սրով եւ ջախջախվեց, որովհետեւ **միակամ** էինք եւ ապավինեցինք միայն **մեր** բազկին ու մտքին:

Արցախն ազատագրվեց: Կնքվեց զինադադար, սակայն պատերազմը դեռ չի՝ ավարտվել: Վկա՝ Ապրիլյան քառօրյան... վերջին 44-օրյան... Եվ ոսոխն այսօր էլ կրկին հոխորտում է: Հայ սպային Եվրոպայի կենտրոնում կացնահարած սինլքոր մարդասպանին հռչակում է տարվա մարդ... Ի՞նչ մարդ... Իր հավաքական ամբողջության մեջ լույսի թշնամի, խաղաղության հակոտնյա ոսոխը (թուրք, թե ազերի) չի կարող հանդուրժել եւ ոչ մի **բարի գոյություն**՝ անգամ իր տիրապետության ներքո... Իր **չար** բնույթը թույլ չտվեց հանդուրժել անգամ նախնիների խաչքարերի վերջին փշուրների լուռ վկայությունը իր **գողացած տարածքում**... Ինչպե՞ս ներենք, ինչպե՞ս հանդուրժենք **մարդկության մոլախոտի** ներկայությունը երկրագնդի վրա: Ով՞ ով, մենք հո՞ գիտենք այդ հանդուրժողականության գինը... Որ ի վերջո հանդուրժողին ենթարկում է **ցեղասպանության**... Մոռանա՞նք մեր հայրենակիցների **Սունգայիթյան սպանողը, Բաքվի հայության կոտորածները**, նոր պատերազմի սանձազերծումն ու **Թալիշի վայրագությունները**, ռազմագերիներին, անգամ՝ արդեն զոհվածներին, խոշտանգելը... Ո՞րը թվարկել եւ ինչո՞ւ թվարկել: Ամեն օր, ամեն ժամ իր վայրագ դեմքը թաքցնել անգամ չփորձող գազանը եղել եւ մնում է վտանգավոր, քանի դեռ ջախջախված չէ **ի սպառ**:

Մենք իրավունք չունենք ներելու, հանդուրժելու, զիջելու խավարին, որովհետեւ **ուխտ ունենք դեպի լույս**: Եվ որպեսզի **եղիցի լույս**, պիտի լինի **փետրվար**, որ չուշանա եւ մայիսը:



Սրբոց Վարդանանց



Եթե հայ ես, ուրեմն՝ զինվոր ես, անկախ նրանից՝ **սուր** է ձեռքինդ, **խաչ**, **բահ**, թե **գրիչ**: Ու հայոց պատմությունն էլ եղել է ընդհանրական **Ավարայր**. գոյապայքար թե՛ իրական, թե՛ հոգեւոր պատերազմների մեջ՝ հանուն ինքնության, տեսակի պահպանման, հանուն համընդհանուր քաղաքակրթական զարգացման:

Ավարայրը մեր հիշողության մեջ մնացած **առաջին հայրենական պատերազմն** է, նաեւ **աշխարհում հանուն հավատի մղված առաջին խոշոր մարտն ընդհանրապես**, որ մեզանում մնաց՝ որպես հանուն հայրենիքի անձնագոհության եւ գիտակցված մահի գաղափարական խորհրդանիշ. **«Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»**, - **Վարդանանց** պատմիչ **Եղիշեի** բանաձեւ-ձեւակերպումը եղավ մեր ամենից նվիրական ասույթ-կարգախոսը:

Սուրբ Վարդանանք. այս անունով են ճանաչվում այն բոլոր նահատակները, ովքեր մարտիրոսվեցին **Ավարայրի** ճակատամարտում՝ **451թ., վասն Հիսուսի, վասն Հայրենյաց**:

Հաճախ ենթադրվում է, թե **քրիստոնեությունը** ստրկության ու լոկ հնազանդության ուսմունք է: Մինչդեռ տասնյակ դարեր առաջ **Վարդանանք** ապացուցեցին, որ **քրիստոնեությունը** կոչում է սխրանքի եւ հավերժության:

Ավարայրը քրիստոնյա աշխարհի թերեւս առաջին ու միակ ռազմական բախումն էր, ուր լույսի եւ խավարի, կյանքի եւ մահվան, հավատի եւ հավատադրության, հայրենիքի ու ստրկացման իրարամերժ գաղափարներն էին բախվում, ուր ճշտվում էր մեկ անգամ եւս **Հիսուսի՝ մեռնելով ապրելու** պատգամը:

Վարդանանց սուրբ նահատակների տոնն ամեն տարի նշվում է Մեծ Պահքին նախորդող հինգշաբթի օրը: Այս տարի տոնը ոգեկոչվելու է վաղը՝ **փետրվարի 24-ին**:

Նախորդող երեքշաբթի օրը Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց **Ղեւոնդյանց** ոգեկոչման օրը: Այս անվան տակ ճանաչվում են այն հոգեւորականները, ովքեր Վարդանանց պատերազմից հետո, Ատրորմիզդ մարգապանի դրդումով, պարսից Հարգկերտ Բ-ի հրամանով ձերբակալվում են՝ Հայոց երկիրն ապստամբական մոր խլրտումներից զերծ պահելու համար, եւ տարվում Ապար աշխարհի Նյուշապուհ բերդը: Այնտեղ նրանց առաջարկվում է ընդունել մագդեզական կրոնը՝ իրենց կյանքը փրկելու համար: Ղեւոնդյանք մերժում են այդ առաջարկը եւ նահատակվում: Պատմությունը հիշում է նրանց անունները. **Հովսեփ կաթողիկոս, Սահակ եպիսկոպոս, Ղեւոնդ երեց, Մուշե քահանա, Արշեն երեց, Քաջաջ սարկավազ**: Սրանց հետ էին նաեւ **Աբրահամ եւ Խորեն երեցները**, որոնց ականջները միայն կտրելով ազատ են արձակում՝ տարագրության մեջ ապրելու պայմանով: Որոշ ժամանակ անց, չդիմանալով Ասորեստանի տոթակեզ եղանակներին, Խորենը մահանում է: Աբրահամը հետագայում թույլտվություն է ստանում հայրենիք վերադառնալու եւ ձեռնադրվում է Բզնունիքի եպիսկոպոս: Նրան է վերագրվում ասորական հայտնի **«Վկայք Արեւելից»** երկի հայերեն թարգմանությունը:

Հարունակությունը՝ էջ 7



Կառավարության նիստում

3 մլրդ 265 մլն 536 հազար դրամի կապիտալ ներդրումներ՝ կրթական, մշակութային եւ մարզական հաստատություններում

Կառավարության փետրվարի 17-ի որոշմամբ՝ կրթական, մշակութային եւ մարզական մի շարք հաստատություններում կապիտալ շինարարության աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման եւ նախագծային աշխատանքների իրականացման, ինչպես նաեւ հուշարձանների վերականգնման նպատակով 3 մլրդ 265 մլն 536 հազար դրամի չափով վերաբաշխում է կատարվել 33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության 2022 թվականի բյուջեով նախատեսված կապիտալ ծրագրերում:

Ներկայացնելով նախագիծը՝ 33 ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** նշել է, որ նախատեսվում է իրականացնել միջին մասնագիտական ուսումնական 4 հաստատությունների շենքային պայմանների բարելավում, մոդուլային մանկապարտեզի 10 շենքերի կառուցում, մոդուլային 12 մանկապարտեզի նախագծում, մոդուլային դպրոցի 21 շենքի կառուցում, մոդուլային դպրոցի 10 շենքի նախագծում, 2 դպրոցում նոր մասնաշենքերի կառուցում, 17 հանրակրթական դպրոցում նոր մարզադահլիճների կառուցում, եւս 5 դպրոցում՝ մարզադահլիճների վերակառուցում, 2 մարզադպրոցի կառուցում: Հատկացման շրջանակում միջոցներ կտրամադրվեն նաեւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շենքի հիմնանորոգման համար: Նախարարության ընթացիկ ծրագրերի հատկացումներից շուրջ 80 մլն 362.3 հազար դրամ գումար կհատկացվի Հայաստանի պատմության թանգարանի ջեռուցման եւ օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքները շարունակելու եւ ավարտելու համար: Միջոցներ կհատկացվեն նաեւ 4 հուշարձանների վերականգնման աշխատանքներին: Ծրագրեր եւ նախատեսված բոլոր մարզերում:

Կարելու է նախատեսվող աշխատանքները՝ վարչապետ **Նիկոլ Փաշինյանը** նշել է, որ դրանք, որպես առաջնահերթություն, բխում են 33 կառավարության ծրագրից, որով նախատեսվում է 300 դպրոցի եւ 500 մանկապարտեզի կառուցում, հիմնանորոգում կամ վերակառուցում: Այդ նպատակով Կառավարությունը նախկինում եւս կատարել է մի շարք հատկացումներ, այժմ իրականացվում է հերթական հատկացումը՝ կառավարության ծրագրի իրականացման ուղղությամբ, որպեսզի ընթացքի մեջ գտնվող աշխատանքներն ավարտին հասցվեն, ինչպես նաեւ կրթական-մշակութային ոլորտում նոր կապիտալ ներդրումներ ապահովվեն: Վարչապետը նաեւ նշել է, որ աշխատանքներն ընդգրկում են հանրապետության ողջ տարածքը. ծրագրեր եւ նախատեսված բոլոր մարզերում:

Ստորեւ ներկայացնում ենք հաստատությունների ցանկը:

Քոլեջներ

- Վանաձորի Միքայել Թավրիզյանի անվան արվեստի պետական քոլեջ,
- Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջ,
- Նոր Գեղիի ակադեմիկոս Գ. Աղաջանյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ,
- Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ:

Մոդուլային մանկապարտեզների կառուցում

- 33 Արագածոտնի մարզի Ալազյազ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Արարատի մարզի Արալեզ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Արմավիրի մարզի Արեւիկ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Արմավիրի մարզի Այգեւան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Գեղարքունիքի մարզի Աստղածոր համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Լոռու մարզի Սպիտակ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Լոռու մարզի Գոգարան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Կոտայքի մարզի Հրազդան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Սյունիքի մարզի Սիսիան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Տավուշի մարզի Արտուշ համայնքի Բագրատաշեն բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ:

Մոդուլային մանկապարտեզների նախագծահետազոտական աշխատանքներ.

- 33 Արմավիրի մարզի Գետաշեն համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Արմավիրի մարզի Նորավան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Արմավիրի մարզի Փշատավան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Արմավիրի մարզի Լեւոնդի համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Լոռու մարզի Լեւոնավան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Լոռու մարզի Լուսաղբյուր համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Կոտայքի մարզի Զարեմցավան համայնքի Ֆանտան բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Երրանի մարզի Արթիկ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Երրանի մարզի Արեւատ համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Սյունիքի մարզի Սիսիան համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,

- 33 Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ,
- 33 Տավուշի մարզի Արտուշ համայնքի Բագրատաշեն բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզ:

Փոքրաքանակ երեխաներով համալրված մոդուլային դպրոցներ

- 33 Արագածոտնի մարզի Լուսակնի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Արագածոտնի մարզի Գառնահովիտի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Գեղարքունիքի մարզի Շատըրեք գյուղի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Գեղարքունիքի մարզի Լեռնահովիտ գյուղի Վարուժան Բարեղամյանի անվան հիմնական դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Գեղարքունիքի մարզի Զիլ գյուղի միջնակարգ դպրոց,
- 33 Լոռու մարզի Մեղովկայի միջնակարգ դպրոց դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Լոռու մարզի Հագուի հիմնական դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Կոտայքի մարզի Զրառատի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Կոտայքի մարզի Կաթնաղբյուրի հիմնական դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Երրանի մարզի Արեգնաղենի միջնակարգ դպրոց,
- 33 Երրանի մարզի Բերդաշենի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Երրանի մարզի Կապսի միջնակարգ դպրոց,
- 33 Սյունիքի մարզի Վաղատինի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Սյունիքի մարզի Հարժիսի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոց ԴՈՍԿ (ավարտ 2022թ.),
- 33 Սյունիքի մարզի Դարբասի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Վայոց ձորի մարզի Գոմքի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Վայոց ձորի մարզի Եղեգիսի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Վայոց ձորի մարզի Զիվայի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն,
- 33 Արարատի մարզի Դեղձուտի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Արմավիրի մարզի Արգինայի միջնակարգ դպրոց (ավարտ 2022թ.),
- 33 Տավուշի մարզի Կիրանցի Գագիկ Վարդանյանի անվան հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն:

Հանրակրթական դպրոցների նոր մասնաշենքերի կառուցում

- 33 Գեղարքունիքի մարզի Ն.Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց,
- 33 Արարատի մարզի Մասիսի թիվ 5 ավագ դպրոց:

Դպրոցների նոր մարզադահլիճների կառուցում

- Երեւանի Մ. Նալբանդյանի անվան հ. 33 հիմնական դպրոց,
- Երեւանի Մ. Խանգաղյանի անվան հ. 184 ավագ դպրոց,
- Երեւանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց,
- Երեւանի Մ. Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց,
- 33 Արագածոտնի մարզի Ալազյազի միջնակարգ դպրոց,
- 33 Արագածոտնի մարզի Թալինի ավագ դպրոց,
- 33 Արմավիրի մարզի Արտինեի միջնակարգ դպրոց,
- 33 Արմավիրի մարզի Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց,
- 33 Արմավիրի մարզի Վաղարշապատի Ե. Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց,
- 33 Արմավիրի մարզի Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց,
- 33 Արմավիրի մարզի Արմավիրի N 6 հիմնական դպրոց,
- 33 Գեղարքունիքի մարզի Գագարինի միջնակարգ դպրոց,
- 33 Լոռու մարզի Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց,
- 33 Լոռու մարզի Վանաձորի Ծ. Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց,
- 33 Լոռու մարզի Ստեփանավանի N1 վարժարան,
- 33 Լոռու մարզի Ագարակի միջնակարգ դպրոց,
- 33 Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց:

Դպրոցների մարզադահլիճների վերակառուցում

- Երեւանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց,
- 33 Արմավիրի մարզի Շահումյանի միջնակարգ դպրոց,
- 33 Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց,
- 33 Լոռու մարզի Վանաձորի Դ. Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց,
- 33 Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց:

Բարձրագույն ուսումնական հաստատություններ

- Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա:

Մարզադպրոցներ

- Հեծանվային սպորտի, Հրամո Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության եւ ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցներ,
- Արմավիրի մարզի Զրառատ համայնքի Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադպրոց:

Թատրոններ

- Երեւանի մնջախաղի պետական թատրոն:

Թանգարաններ

- Հայաստանի պատմության թանգարանի ջեռուցման եւ օդափոխության համակարգի տեղադրում:

Վերականգնվող հուշարձաններ

- 33 Լոռու մարզի Ալավերդի համայնքի Սանահինի վանական համալիրի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու տանիքների նորոգում,
- 33 Լոռու մարզի Քոբայր ե/գ կայարանի Քոբայրավանքի սեղանատան վերականգնում,
- 33 Տավուշի մարզի Գոշ համայնքի Գոշավանքի գավիթի տանիքածածկերի նորոգում,
- 33 Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հ.Շարամբեյանի անվան ժողովրդական արհեստների թանգարանի նորոգում, ամրակայում:

Հուշարձանների վավերագրման եւ ուսումնասիրման աշխատանքներ, այդ թվում՝ հետախուզում եւ պեղում, գիտաճանաչման փաստաթղթերի կազմում եւ փորձաքննում

- Ագարակ համայնքի Ագարակ վաղ բրոնզե դարի կացարանների, միջնադարյան համալիրի եւ պարսպապատի ամրակայում,
- Դսեղ համայնքի Բարձրաբաշի Սբ. Գրիգոր վանական համալիրի կառույցների, նորոգում, ամրակայում, վերականգնում եւ տարածքի բարեկարգում,
- Երերույքի տաճարի եւ փոքր դամբարանի թաղերի ամրակայում, Անիպեմզայի մշակույթի տան վերականգնում եւ փոքրիկ թանգարանի ստեղծում,
- Շատիվանքի վանական համալիրի ամրակայում, մասնակի վերականգնում եւ տարածքի բարեկարգում:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշխարհի հետ

Օլիմպիադաներ

Նախարարությունը պատրաստ է զարգացնել համագործակցությունը

Մեկնարկել է հանրապետական փուլը

Նախարար Վահրամ Դումանյանը ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) Հայաստանի առաքելության տնօրեն **Ջոն Ալեյոյին**։ Հանդիպմանը ներկա է եղել նաև ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը։

Նախարարը շնորհավորել է Ջոն Ալեյոյին՝ ԱՄՆ ՄԶԾ Հայաստանի առաքելության տնօրենի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ եւ մաղթել արդյունավետ աշխատանք։ Վահրամ Դումանյանի խոսքով՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը մեր երկրում կարեւոր գործունեություն է ծավալում, եւ նախարարությունը պատրաստ է զարգացնել համագործակցությունը կրթության, մշակույթի եւ երիտասարդության ոլորտներում։

ՄԶԾ Հայաստանի առաքելության տնօրեն Ջոն Ալեյոյն իր հերթին նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը համակարգում է Հայաստանի համար հեռանկարային առումով մի շարք կարեւոր ուղղություններ եւ այդ շրջանակներում արժանագրել է բազում հաջողություններ։ Նա նաև փաստել է այդ ոլորտներում որոշակի մարտահրավերների առկայությունը՝ վստահություն հայտնելով, որ համատեղ ծրագրերի, միասնական նպատակի եւ ջանքերի համադրման արդյունքում կարձանագրվի համապատասխան առաջընթաց, քանի որ առկա է նվիրում, պատրաստակամություն եւ ռիսկերի հաղթահարման կամք։

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշել է այն ծրագրերը, որոնց ուղղությամբ կողմերը կարող են համագործակցությունը զարգացնել։ Մասնավորապես անդրադարձ է եղել ԱՄՆ ՄԶԾ ֆինանսավորմամբ իրականացվող «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստան»



նուն» ծրագրին, որը համընդհանուր ներառականության ծանապարհին նախաձեռնած թիրախային նպատակներին եւ արդյունքներին հասնելու գործընթացում աջակցություն է ԿԳՄՍ նախարարությանը։ Փոխնախարարը շեշտել է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից նախատեսվող երիտասարդության մասնակցության ծրագրի շրջանակում հնարավոր համագործակցությունը, ինչպես նաև կարելու է մշակութային տուրիզմի ոլորտում ջանքերի համադրման հարցը՝ այդ համատեքստում անդրադառնալով ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացված մշակութային տուրիզմի «Իմ Հայաստան»- My Armenia» ծրագրին։ Արթուր Մարտիրոսյանն անդրադարձել է նաև ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից Հայաստանում աշխատուժի զարգացման ծրագրի շրջանակում փոխգործակցությանը՝ կարելու էլով ագրարային ոլորտում մասնագետների պատրաստման

եւ կադրերի համալրման խնդիրը։

Կողմերն անդրադարձել են նաև ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության հետ հնարավոր համագործակցությանը նախարարության կողմից իրականացվող ծրագրային բյուջետավորման գործընթացի, դրա ռիսկերի կառավարման եւ հաշվետվողականության համակարգի համատեքստում։

Հանդիպման ավարտին Վահրամ Դումանյանը տեղեկացրել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը՝ կարելու էլով բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ ներգրավվածությունը վերոնշյալ գործընթացում։

Հեղինե ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Հ. Հ.

Ռեկտորների խորհրդի նիստում

Քննարկվել է կրթության զարգացման պետական ծրագիրը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում տեղի է ունեցել ռեկտորների խորհրդի նիստ, որը վարել է ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը։ Հանդիպմանը մասնակցել են նաև նախարարի տեղակալներ Կարեն Թեյմուրյանը եւ Արթուր Մարտիրոսյանը։

Նիստի օրակարգում ներառված էր երկու հարց՝ հանրային քննարկման ներկայացված 2022-2030 ուստարվա համար բուհերին հատկացվող ընդունելության անվճար տեղերի եւ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծերը։

Անդրադառնալով ըստ մասնագիտությունների պետականության տեղերի բաշխման հարցին՝ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ պետք է վերանայել պետական պատվերի քաղաքականությունը եւ հստակեցնել դրա հատկացման նպատակն ու ուղղությունները։ Նրա խոսքով՝ այս բարդագույն հարցում էական են երկու շահագրգիռ կառույցների՝ Էկոնոմիկայի եւ Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունների առաջարկները։

Նախարարի տեղակալ Կարեն Թեյմուրյանը տեղեկացրել է, որ բուհերից ստացվել են համապատասխան առաջարկներ, որի արդյունքում այս տարի նախատեսվել է ավելացնել բակալավրի կրթական ծրագրով ընդունելության համար նախատեսվող անվճար տեղերի թիվը։ Ըստ փոխնախարարի՝ ավելացված տեղերը հատկացվելու են բնագիտամաթեմատիկական, ճարտարագիտական եւ տեխնոլոգիական (STEM)



ոլորտի մասնագիտություններին՝ հաշվի առնելով դրանց կարելությունը՝ պետության տնտեսության զարգացման համար։

Անդրադառնալով օրակարգի երկրորդ հարցին՝ «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը՝ Կարեն Թեյմուրյանը ներկայացրել է բարձրագույն կրթության ոլորտում առաջարկվող հիմնական ռազմավարական ուղղությունները։ Փոխնախարարի խոսքով՝ ծրագրում ամրագրվել է, որ պետական եւ ոչ պետական բուհերը պետք է գործեն մրցակցային մոդելով՝ զարգացնելով կրթությունը այն է, որ պետք է մշակվեն համապատասխան բուհական ստանդարտներ, այդ թվում՝ ըստ մասնագիտությունների, եւ այս առումով պետության կողմից բոլոր բուհերը պետք է ունենան մույն մոտեցումը։

Նախարարի տեղակալն ընդգծել է, որ ՀՀ բուհերը պետք է առնվազն գրանցվեն հայտնի ռեյտինգային համակարգերում, որտեղ սահմանված են հստակ միջազգային չափանիշներ։ Նա նաև կարելու է դասախոսների համալրման մեխանիզմների մշակումը, ինչպես նաև այն խնդիրը, որ ամեն բուհ հնարավորություն չունենա տրամադրելու երրորդ մակարդակի կրթություն։ Այս հարցում, ըստ Կարեն Թեյմուրյանի, պետությունը կսահմանի հստակ ու խիստ չափանիշներ։ «Ծրագրում սահմանվել են նաև հավակնոտ թիրախներ, այն է՝ մինչեւ 2030 թվականն առնվազն չորս բուհ ընդգրկված լինի միջազգային վարկանիշային աղյուսակների լավագույն 500-ի մեջ, ինչպես նաև բուհական համակարգում բոլոր մասնագիտություններով կրկնապատկվի օտարերկրյա ուսանողների քանակը»,-

նշել է Կարեն Թեյմուրյանը՝ ընդգծելով, որ անելու են հնարավորը՝ հասնելու նախաձեռնած թիրախներին։

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն իր հերթին շեշտել է, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, ՀՀ կառավարությունը պետք է հաստատի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» բխող գործողությունների ծրագիրը։ Նա կարելու է օրենքում ամրագրված մինչեւ 2030 թվականն արդյունքային շրջանակի ապահովման խնդիրը՝ այդ հարցում կարելու էլով բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցությունը նախագծի քննարկման գործընթացում։

Հանդիպմանն անդրադարձ է եղել նաև բարձրագույն կրթության ոլորտում առկա մի շարք մարտահրավերներին եւ դրանց լուծման ուղիներին։ Վահրամ Դումանյանը փաստել է, որ պետությունը պետք է չմիջամտի մասնագիտական կրթության ոլորտի գործընթացներին, այլ ձեւավորի այնպիսի միջավայր, որպեսզի բուհերը համապատասխանեն միջազգային չափանիշներին։ Նախարարը կարելու է նաև պետական եւ ոչ պետական բուհերի՝ մրցակցային մոդելով զարգացնելու համագործակցությունը։

Նիստին մասնակցի ռեկտորները հանդես են եկել համապատասխան դիտարկումներով եւ բարձրաձայնել իրենց հուզող հարցերը, որոնց վերաբերյալ ոլորտի պատասխանատուները տվել են պարզաբանումներ։

Հ. ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Համատեղ ասուլիս

Ներկայացվել է կրթության զարգացման պետական ծրագրի նախագիծը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունում հրավիրված մամուլի ասուլիսին ներկայացվել են «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի հիմնական առաջնահերթությունները եւ ռազմավարական ուղղությունները:

Համատեղ ասուլիսի բանախոսներն էին ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը, Ժաննա Անդրեասյանը եւ Կարեն Թռչունյանը:

Վահրամ Դումանյանը նշել է, որ 2015 թվականից ի վեր բացակայել է կրթության զարգացման ռազմավարությունը, եւ ներկայացվող նախագիծը սահմանում է մինչեւ 2030 թվականը ոլորտի հիմնական առաջնահերթությունները: Նա նշել է, որ փաստաթուղթը համահունչ է ՀՀ կառավարության ծրագրին եւ Հայաստանի վերափոխման մինչեւ 2050 թվականի ռազմավարությանը:

«Ռազմավարության հիմքում դրված է երկու կարեւոր նպատակ. առաջին՝ յուրաքանչյուր ոք ունի որոշակի տաղանդ, որը պետք է բացահայտել եւ ամօին տալ ինքնադրսեւորվելու հնարավորություն: Եվ երկրորդ՝ բոլոր փուլերում կրթությունը պետք է լինի որակյալ եւ մրցունակ, հիմնված լինի ազգային արժեքների վրա, եւ այդ ամենը նպաստի մեր երկրի զարգացմանը, հզորացմանը եւ առաջընթացին», - նշել է նախարարը՝ ընդգծելով, որ հանրային քննարկման ընթացքում նախագծի վերաբերյալ հնչած բոլոր արժեքավոր առաջարկները, ըստ անհրաժեշտության, կընդունվեն:

Ծրագրի իրականացումը հանրակրթության ոլորտում մինչեւ 2030 թվականը կապահովի հետեւյալ արդյունքային շրջանակը

Հանրակրթության ոլորտում ծրագրի հիմնական ռազմավարական ուղղությունները եւ թիրախները ներկայացրել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Նա նշել է, որ բոլոր կրթական մակարդակների համար որդեգրվել է մեկ միասնական կառուցվածք, եւ, ըստ այդմ, ծրագրում անդրադարձ կա թե՛ ենթակառուցվածքների, թե՛ կրթության բովանդակության, թե՛ մարդկային ռեսուրսի եւ թե՛ կառավարման ու ֆինանսավորման ձեւերին: **Նախադպրոցական կրթության ոլորտում**, ըստ փոխնախարարի, նախատեսվում է, որ մինչեւ 2030 թվականը բոլոր բնակավայրերում հասանելի կլինեն մատչելի նախադպրոցական ծառայություններ, եւ յուրաքանչյուր ընտանիք ի վիճակի կլինի՝ օգտվելու այդ ծառայություններից: Որպես հաջորդ թիրախներ՝ ամրագրվել են, որ դպրոց ընդունվող բոլոր երեխաներն առնվազն մեկ տարի ընդգրկված լինեն նախադպրոցական ծրագրերում, 3-5 տարեկանների առնվազն 95 տոկոսը ներառված լինի նախադպրոցական ծառայություններում, ինչպես նաեւ բոլոր խոշորացված համայնքներում գործեն մտօրի ծառայություններ:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ **հանրակրթության ոլորտում** հստակ սահմանվել է, որ ոչ մի երեխա դուրս չձնա պարտադիր կրթության համակարգից: Նա կարելու է պարտադիր կրթության համակարգից դուրս մնացած երեխաների հայտնաբերումը՝ ընդգծելով, որ խոսքը ոչ միայն ֆորմալ, այլեւ արդյունավետ ընդգրկվածության մասին է:

«Մենք սահմանել ենք, որ ուսումնառության արդյունքներ-ուսումնառության տեւողությունը հարաբերակցությունը այս պահին 8,3 տարի է՝ ըստ Համաշխարհային բանկի չափումների: Սա նշանակում է, որ մեր երեխաները սովորում են 12 տարի, բայց կրթական արդյունքը, որն ունեն, հավասար է 8,3 տարվա: Մեր հիմնական որակական ցուցանիշն է, որ այս հարաբերակցությունը հասցնենք 11,5 տարվա, այսինքն՝ 12 տարի սովորելու տեւողությունը համարժեք լինի 11,5 տարվա», - նշել է ԿԳՄՍ փոխնախարարը:

Ժաննա Անդրեասյանը կարելու է, որ բոլոր դպրոցները համալրված լինեն որակավորված, ատեստավորված մանկավարժներով, որոնք կստանան արժանապատիվ վարձատրություն:

«Օրենքի փոփոխությունից հետո նախատեսվում են ատեստավորման, տարակարգերի շնորհման մեխանիզմների ամ-

բողջական վերանայում, ինչպես նաեւ կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափի փոփոխություն: Հաջորդ տարվա բյուջետային հայտում կներկայացնենք ուսուցիչների դրույքաչափի փոփոխության եւ հավելավճարի սահմանման մեր մոտեցումները, որոնք պետք է թույլ տան գնալ առավելագույնը մինչեւ 400 հազար աշխատավարձ-հավելավճար վարձատրության մեխանիզմին», - նշել է Ժաննա Անդրեասյանը:

Նա ընդգծել է, որ Կառավարության ծրագրով 2026 թվականի ավարտին նախատեսվում է ունենալ հիմնանորոգված, վերակառուցված եւ վերանորոգված առնվազն 300 դպրոց, որոնք կունենան արդիական ենթակառուցվածքներ եւ պայմաններ: Նախատեսված է նաեւ, որ հանրապետության բոլոր դպրոցները կունենան անհրաժեշտ բնագիտական եւ տեղեկատվական տեխնոլոգիաների լաբորատորիաներ:

Որպես որակական ցուցանիշ՝ սահմանվել է, որ բնագիտության եւ մաթեմատիկայի միջազգային գնահատման արդյունքներով Հայաստանի դպրոցականները կցուցաբերեն շարունակական աճ՝ գրանցելով միջինից բարձր բավականին հավակնոտ ցուցանիշներ:

Փոխնախարարը կարելու է նաեւ արտադպրոցական գործունեությունը՝ նշելով, որ առանձին որակական ցուցանիշներ են սահմանվել երեխաների ստեղծագործական եւ ֆիզիկական ակտիվություն ենթադրող աշխատանքը, ինչպե նաեւ հանրային նշանակություն ունեցող նախագծերի իրականացումը:

Ըստ Ժաննա Անդրեասյանի՝ կոնկրետ որակական ցուցանիշներ են սահմանվել նաեւ հայոց լեզվի եւ պատմության, հայ եւ համաշխարհային գրականության, հոգեւոր արժեքների, առողջ ապրելակերպի, առնվազն երկու օտար լեզուների գծով բավարար գիտելիքներ ունենալու մասով:

Նախնական եւ միջին մասնագիտական կրթության ոլորտը մինչեւ 2030 թվականը կապահովի հետեւյալ արդյունքային շրջանակը

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ որպես հիմնական թիրախ՝ սահմանվել է, որ ուսումնարանն ու քոլեջն ավարտելուց հետո, ըստ մասնագիտության, աշխատանքի կանցնի շրջանավարտների առնվազն 90%-ը: Այս ցուցանիշին հասնելու համար, ըստ փոխնախարարի, պետք է շարունակաբար վերանայվեն չափորոշիչները, դասավանդողների նկատմամբ սահմանվի նոր քաղաքականություն, բարելավվեն ենթակառուցվածքները, եւ ներդրվեն ֆինանսավորման



մեր մոդելներ: Այս հարցում նախարարի տեղակալը կարելու է մասնավոր հատվածի հետ համագործակցությունը. առաջիկայում նախատեսվում է էապես խթանել մասնավոր ոլորտի հետ համատեղ ՄԿՈՒ հաստատությունների կառավարման ձեւաչափերը:

Նա կարելու է նաեւ մասնագիտական ուսուցման եւ կրթության հաստատությունների դասակարգումը՝ ըստ իրենց նշանակության, ինչպես նաեւ դասավանդողների ատեստավորման եւ տարակարգերի մեխանիզմների ներդրումը, որը կհանգեցնի վերջիններիս վարձատրության վերանայման: Ժաննա Անդրեասյանը փաստել է, որ նախատեսվում է ՄԿՈՒ հաստատությունների ենթակառուցվածքների շարունակական բարելավում:

Բարձրագույն կրթության ոլորտը մինչեւ 2030 թվականը կապահովի հետեւյալ արդյունքային շրջանակը

Բարձրագույն կրթության ոլորտի արդյունքային ցուցանիշները ներկայացրել է նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը: Նա նշել է, որ ինչպես մասնագիտական ուսուցման եւ կրթության, այնպես էլ բարձրագույն կրթության ոլորտում մինչեւ 2030 թվականը, ըստ մասնագիտության, պետք է աշխատանքի անցնի շրջանավարտների առնվազն 90%-ը: Դրան հասնելու համար, ըստ փոխնախարարի, պետք է բարձրագույն կրթության ոլորտում մշակել ստանդարտներ՝ լիցենզավորման եւ հավատարմագրման գործիքների միջոցով: Կարեն Թռչունյանի խոսքով՝ ծրագրում ամրագրվել է նաեւ, որ պետական եւ ոչ պետական բուհերը պետք է գործեն մրցակցային մոդելով:

Նա փաստել է, որ այդ գործընթացների իրականացման համար նախատեսվում է չափորոշիչների բարելավում կամ նոր չափորոշիչների ստեղծում, մասնավորապես՝ բոլոր կրթական ծրագրերը պետք է համապատասխանեցվեն որակավորումների ոլորտային շրջանակներին. նախատեսվում է ունենալ մինչեւ 40 այդպիսի շրջանակ: Դրանցից, ըստ փոխնախարարի, կբխեն լիցենզավորման պայմանների եւ պահանջների ստանդարտների մշակումը եւ ներդրումը, որից հետո՝ նաեւ հավատարմագրման գործընթացը՝ ինստիտուցիոնալ եւ ծրագրային: Նա նաեւ շեշտել է, որ բուհերի տարբեր մասնագիտությունների համար կմշակվի ֆինանսավորման նոր համակարգ:

«Ունենք հավակնոտ թիրախ՝ լավագույն 500 բուհերի ցանկում ունենալ առնվազն 4 բուհ: Կարծում ենք, որ կարող ենք հասնել դրան, եթե ապահովենք որակյալ կրթու-

թյան բոլոր պայմանները», - նշել է նախարարի տեղակալը՝ ընդգծելով, որ մեկ այլ թիրախ էլ սահմանվել է, որ բուհական համակարգում բոլոր մասնագիտություններով կրկնապատկվի օտարերկրյա ուսանողների քանակը:

Նախագծով սահմանվել են հստակ չափելի արդյունքներ

Նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ՀՀ կառավարությունը պետք է հաստատի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրից» բխող գործողությունների ծրագիրը: Նա նշել է, որ նախատեսվում է ընդլայնել հայագիտական կենտրոնները եւ որակապես բարելավել դրանք, ինչպես նաեւ իրականացնել սփյուռքի ուսուցիչների վերապատրաստում, եւ այս ուղղությամբ քայլերը կներառվեն գործողությունների ծրագրում:

Արթուր Մարտիրոսյանի խոսքով՝ կատարվել է հետազոտություն կրթության հասանելիության, մատչելիության, որակի եւ համակարգի արդյունավետության բարձրացման տեսանկյունից: Նա վստահեցրել է խնդիրները ճիշտ ակտորոշելուց եւ կախված քայլերի արդյունավետությունը:

«Մշակել ենք ռազմավարական 3 ուղղություն՝ ներառական, սովորողակենտրոն կրթության միջավայրի ստեղծում, կրթության կառավարման համակարգի ստեղծում, ինչպես նաեւ մրցունակության ապահովում: Մենք նաեւ խնդիր ունենք հայկական կրթական արտադրանքներն արտահանելու մասով, ինչպես, օրինակ, ԹՈՒՄՈՒ-ն է, որի հանդեպ կա մեծ հետաքրքրություն: Մեր խնդիրն է կարողանալ աշխարհի հետ համահունչ զարգանալ», - ընդգծել է Արթուր Մարտիրոսյանը՝ շեշտելով, որ նախագծով սահմանվել են հստակ չափելի արդյունքներ ինչպես 2030 թվականի, այնպես էլ միջանկյալ՝ 2026 թվականի համար:

Նա հիշեցրել է, որ նախագիծը ներկայացված է հանրային քննարկման, եւ ակնկալվում է քաղաքացիների եւ շահառու խմբերի ակտիվ մասնակցությունը նախագծի քննարկման գործընթացում:

Բանախոսների կողմից նախագծի ներկայացումից հետո լրագրողները մի շարք հարցեր են ուղղել նրանց: Դրանք վերաբերել են բնագիտական առարկաների գծով ուսուցիչների պակասի, ընդունելության քննությունների, տարածաշրջանային լեզուների ուսուցման, բուհերի հնարավոր օպտիմալացման եւ այլ խնդիրների:

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ձեռնարկների շտրհանդես

Աջակցություն ներառական կրթությանը

Մայրենի լեզվի միջազգային օրվա առիթով փետրվարի 21-ին Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնում տեղի է ունեցել «*Ուսումնաօժանդակ նյութերի դերը կրթության արդյունավետ կազմակերպման գործընթացում*» թեմայով քննարկում:

Բացման խոսքով հանդես է եկել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Ժաննա Անդրեասյանը**: Քննարկմանը մասնակցել են Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (ՀՄԿ), ԿԳՄՍ նախարարության, Յունիսեֆի, Կրթության զարգացման եւ նորարարության ազգային կենտրոնի եւ հանրակրթական դպրոցների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում տեղի է ունեցել նաեւ 2021 թվականի ընթացքում ՀՄԿ-ի կողմից մշակված եւ հրատարակված ուսումնաօժանդակ ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների եւ աշխատանքային գիրք-տետրերի շնորհանդեսը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանն իր խոսքում կարելու էլ է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի շարունակական քայլերը՝ կրթության ոլորտում համընդհանուր ներառականության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

«*Մեթոդական ձեռնարկների, ուսումնական նյութերի հասանելիություն ապահովելու եւ, այդպիսով, ոլորտում ներգրավված մասնագետների համար նոր հնարավորություններ ստեղծելու եւ կրթության ներառականությանը աջակցելու գործիքակազմը համարում են կրթական քաղաքականության կարեւոր ուղղվածություններ*ից մեկը: Մշակված ուսումնական նյութերը ոլորտի մասնագետների համար կարող են դառնալ լավագույն ուղեցույց՝ աշխատանքի ընթացքում հանդիպող ամենօրյա խնդիրները կարգավորելու համար»,- նշել է նախարարի տեղակալը՝ շեշտելով, որ կրթության ներառականությանն ուղղված անելիքները պետք է շարունակաբար զարգացնել:

Ժ. Անդրեասյանի խոսքով՝ մշակված ձեռնարկները ոլորտի մասնագետների համար սպասված էին: Նախարարի տեղակալը մասնավորապես առանձնացրել է «*Ուսուցչի օգնականի ձեռնարկ*» մեթոդական ուղեցույցը, որտեղ նկարագրված են ուսուցչի օգնականի պարտականությունները եւ անելիքները, ուսուցիչների հետ համագործակցության ձեւերը: «*Ուսուցչի օգնականի հաստիքը ներդրվել է դպրոցներում համընդհանուր ներառման անցնելու ժամանակ: Պիտարկումները ցույց են տալիս, որ ոչ միշտ է, որ ուսուցչի օգնականները լիարժեք պատկերացնում են իրենց անելիքները: Մեթոդական նյութերն այս առումով շատ անհրաժեշտ են՝ օգնելու մասնագետներին՝ արդյունավետ կազմակերպելու իրենց աշխատանքը*»,- նշել է նա՝ հավելելով, որ մեթոդական ձեռնարկի անհրաժեշտության մասին ուսուցչի օգնականները բազմիցս բարձրաձայնել են:

Ներառական կրթությունը ենթադրում է նաեւ ուսումնական նյութերի հարմարեցումներ

«*Ներառական կրթությունը ենթադրում է նաեւ ուսումնական նյութերի հարմարեցումներ՝ ուղղված երեխաների կարիքներին: Մեր դպրոցներում այդպիսի նյութերի բացն ակնհայտ է*»,- նշել է Ժաննա Անդրեասյանը եւ շարունակել՝ նշելով, որ Հանրապետա-

կան մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից մշակված ձեռնարկներն ու ուսումնական նյութերը այդ բացը լրացնելու նպատակ ունեն: Նախարարի տեղակալը նշել է, որ ներառականության ապահովումը պետք է դառնա մասնագիտական պարտադիր կոմպետենցիա (կարողունակություն)՝ յուրաքանչյուր ուսուցչի համար: Այս նպատակով ուսուցչի պարտադիր ատեստավորումից առաջ իրականացվող վերապատրաստումների պետական ծրագրում ներառված է նաեւ ներառականության բաղադրիչը:

Հանրակրթության ոլորտում ավարտվել է անցումը համընդհանուր ներառման

Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ հանրակրթության ոլորտում ամբողջությամբ իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: 2021-22 ուսումնական տարվանից Արարատի եւ Վայոց Ձորի մարզերում եւս անցում կատարելով համընդհանուր ներառման՝ ավարտվեց ողջ հանրապետությունում համընդհանուր ներառական կրթության անցնելու ծրագիրը: Նախադպրոցական կրթության ոլորտում համընդհանուր ներառական կրթության անցումը կավարտվի 2023 թվականի վերջին:

Մշակվել են նոր ձեռնարկներ եւ ուսումնական նյութեր

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն **Արաքսյա Սավջյանը** ներկայացրել է ՀՄԿ-ի կողմից 2020 -2021 թվականներին մշակված աշխատանքային գիրք-տետրեր, ուսուցչի մեթոդական ուղեցույցներ, ձեռնարկներ: Արաքսիա Սվաջյանը նշել է, որ ձեռնարկների նպատակն է ՀՀ-ում հանրակրթության ոլորտում ներառական կրթության որակյալ իրականացումը, յուրաքանչյուր սովորողի առավելագույն մասնակցության ապահովումը եւ ուսուցչին մեթոդական աջակցության տրամադրումը:

«*Քանի որ ձեռնարկները նորություններ են մեզ մոտ, մենք սեպտեմբերի 1-ից մեկ կիսամյակ դրանք փորձարկել ենք հանրապետության 11 դպրոցներում: Փորձնական ծրագրին մասնակից են եղել եւ ծնողները, եւ սովորողները, եւ ուսուցիչները: Փորձել ենք հետադարձ կապ պահել նաեւ ծնողների հետ հասկանալու համար, թե երեխաները դրանք ինչպիսի արդյունավետությամբ են օգտագործում: Երեխաների զարգացման դինամիկան ենք գնահատել, հետազոտել ենք, թե սկզբում ինչպես էին աշխատում դասերի*



ընթացքում եւ հետո այս նյութերի կիրառման արդյունքում ինչպես են աշխատում»,- նշել է նա:

Ա. Սվաջյանի խոսքով՝ պիլոտային ծրագրի արդյունքների գրանցելումից հետո դեկտեմբերին վերջնական շտկումներ են արվել եւ ձեռնարկները նորից վերահրատարակել են:

«*Մայրենի 1*» եւ «*Մաթեմատիկա 1*» աշխատանքային գիրք-տետրերը ներառում են ուսումնառության նախաայբբենական եւ ծրագրային նախաթվային շրջանները: Նշված երկու աշխատանքային գիրք-տետրերին կից մշակվել է «*Ուսումնական նյութերի հարմարեցումներ*: «*Մայրենի 1*» եւ «*Մաթեմատիկա 1*» աշխատանքային գիրք-տետրերի մեթոդական ուղեցույց», որի նպատակն է աջակցել մանկավարժին յուրաքանչյուր առաջադրանքի կատարմանն ուղղորդելու առումով:

«*Ուսուցչի օգնականի ձեռնարկ*» մեթոդական ձեռնարկում ներկայացված են ուսուցչի օգնականի աշխատանքի մոդելները, նրա առջեւ դրված պահանջները եւ պարտականությունները, ուսուցչի օգնականի գործունեության հիմնական բովանդակությունը եւ իրականացվող աշխատանքների ուղղությունները:

«*Արդյունավետ հարմարեցումներ: Որակյալ կրթություն*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկում տրված են կրթության առանձնահատուկ պայմանների տարբեր կարիքներ ունեցող սովորողների արդյունավետ ուսումնառությունն ու առավելագույն մասնակցությունը խթանող մեթոդական ցուցումներ՝ հարմարեցումների եւ այլընտրանքային տարրերի նկարագրությամբ:

«*Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: հաղթը եւ վարժություններ*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը «*Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկի տրամաբանական շարունակությունն է, որտեղ ներկայացված են գործնական աշխատանքներ՝ խաղերի եւ վարժությունների համակարգված ամբողջությամբ: Ձեռնարկը մշակվել է՝ ընդառաջ գնալով նախադպրոցական ոլորտում համընդհանուր ներառական կրթության ներդրման պահանջներին, որի շրջանակում այս տարվանից սկսած արդեն հանրապետության նախադպրոցական հաս-

տատություններում իրականացվելու է համընդհանուր ներառական կրթություն:

«*Ինչպես խթանել ներառումը հեռավար ուսուցման պայմաններում: Խորհուրդներ ուսուցիչներին*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը մշակվել է՝ հաշվի առնելով ՔՈՎԻԴ-19 համավարակով պարտադրված հեռավար կրթության իրականացման անխուսափելիությունը: Ձեռնարկը նպատակ ունի հեռավար կրթության ժամանակ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար հասանելի որակյալ կրթություն ապահովելու: Նույն նպատակին է ուղղված նաեւ «*Ինչպես խթանել ներառումը հեռավար ուսուցման պայմաններում: Խորհուրդներ ծնողներին*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը: Հեռավար կրթությանն առնչվող ձեռնարկները ստեղծվել են ՅՈՒՆԵՍԿՖ-ի աջակցությամբ:

«*Օգնենք օգնողներին*»,- դասընթաց ուսուցիչների համար» ուղեցույցը մշակվել է Կարմիր խաչի Միջազգային Կոմիտեի (ԿԽՄԿ) հայաստանյան պատվիրակության կողմից ՀՄԿ-ի հետ համագործակցությամբ: Ձեռնարկում կարելու է նաեւ պատերազմական եւ հետպատերազմական իրավիճակներից բխող հոգեբանական խնդիրները:

«*Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը նախատեսված է նախադպրոցական ոլորտում համընդհանուր ներառական կրթության ներդրման համար:

«*Ինչպես խթանել ներառումը դասարանում*» մեթոդական ուղեցույց-ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԵՍԿՖ-ի աջակցությամբ: Ձեռնարկում ներկայացվում են ներառական կրթության հիմնախնդիրները՝ ուսուցիչ-ծնող-մասնագետ համագործակցության ուղղությունները, իրավունքներն ու պարտականությունները:

Հանդիպման ընթացքում ելույթ են ունեցել նաեւ ՅՈՒՆԵՍԿՖ-ի հայաստանյան գրասենյակի կրթական ծրագրերի ղեկավար **Ալվարո Պոդոսյանը**, ԿՋՆԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող **Արտաշես Թորոսյանը**: Բանախոսները պատասխանել են նաեւ քննարկման մասնակիցների հարցերին:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ



Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «*Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (21 դասաժամ), երաժշտության (12 դասաժամ), կերպարվեստի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- ամեն հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են *մինչեւ մարտի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից*:

Մրցույթը տեղի կունենա *մարտի 11-ին՝ ժամը 14:00-ին*, ՀՀ Արարատի մարզի Նորամարգի Ա. Քաղեշյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նորամարգ, 17-րդ փ., 2-39:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 77-49-31 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի «*Գոշի միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի դասավարի (22 դասաժամ), աշխարհագրության (8 դասաժամ), ֆիզիկայի (5 դասաժամ), կենսաբանության (3 դասաժամ), ռուսաց լեզվի (22 դասաժամ), պատմության (5 դասաժամ), մաթեմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- ամեն հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝

ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են *փետրվարի 23-ից մինչեւ մարտի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից*:

Մրցույթը տեղի կունենա *մարտի 11-ին՝ ժամը 14:00-ին*, ՀՀ Տավուշի մարզի Գոշի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 50-97-33 հեռախոսահամարներով:

Հորդորակներ Լեզվի կոմիտեի

Օտար բառերից խուսափելու մասին



Արվեստի որեւէ գործ նկարագրելիս, քննելիս, վերլուծելիս, դրա մասին կարծիք հայտնելիս անհրաժեշտ է հասկանալի, արվեստին վայել խոսք։ Մայրենի լեզվով ասած խոսքը ներկայանալի է եւ մատչելի, երբ զերծ է օտարաբանություններից, այսինքն՝ այն բառերից, որոնց հայերեն համարժեքները կան։

Առանձնացրել եւ ներկայացնում ենք արվեստի տարբեր ճյուղերում հանդիպող օտար բառերի հայերեն համարժեքները, որոնք օգտակար կլինեն հատկապես արվեստասեր (նաեւ արվեստագետ) հանրությանը։

1. ակվարել – 1. ջրաներկ, 2. ջրանկար
2. բյուստ – կիսանդրի
3. դոկումենտալ – վավերագրական
4. դուետ – 1. զուգերգ, 2. զուգանվագ,

3. զուգապար
5. էկզեմպլար – նմուշ
6. էքզիզ – 1. ուրվանկար, 2. ուրվագիծ,
3. ծեպանկար
7. էքսպոնատ – ցուցանմուշ
8. կուլիս – հետմաքեն
9. կուլմինացիա – բարձրակետ, գագաթնակետ
10. կվարտետ – քառյակ
11. կրեստիվ – ստեղծագործ, ստեղծարար
12. մարիոնետ – խամաճիկ, խաղատիկնիկ
13. միմիկա – դիմախաղ
14. մոլբերտ – նկարակալ
15. մոնոլոգ – մենախոսություն
16. մոմինացիա – անվանակարգ
17. շեդեր – գլուխգործոց

18. պալիտրա – ներկապնակ, գունապնակ
19. պեյզաժ – բնանկար, բնապատկեր
20. պորտրետ – դիմանկար
21. ռեժիսոր – բեմադրիչ
22. ռեպերտուար – 1. խաղացանկ, 2. երգացանկ, 3. երաժշտացանկ
23. ռեստավրացիա – վերականգնում
24. ռետրոսպեկտիվ – հետահայաց
25. սոլիստ – մենակատար
26. սուֆլյոր – հուշարար
27. վիտրաժ – ապակենկար
28. օրկեստր – նվագախումբ, երաժշտախումբ
29. օրնամենտ – 1. զարդանախշ, զարդապատկեր, 2. երաժշտական ծայնադրվագ
30. ֆրեսկա – որմնանկար։

Հայերեն համարժեքները կիրառելու մասին

Կյանքում տեղի ունեցող ամեն մի փոփոխություն, նորույթ իր անդրադարձն է ունենում լեզվում։ Այդպես ծնվում են բառերը, որոնք համալրում են լեզվի բառային կազմը։ Նորաստեղծ բառերին շունչ տալու համար անհրաժեշտ է դրանք գործածել, շրջանառել։

Բանավոր ու գրավոր խոսքում (հատկապես՝ մասնագիտական) շարունակ կիրառելով հայերենում վաղուց եղած բառերն ու եզրույթները՝ մենք նպաստում ենք հայոց լեզվի հարատևությանը։

Ներկայացնում ենք օտար բառեր, որոնց հայերեն համարժեքները կան, եւ անհրաժեշտ է հետևողականորեն գործածել դրանք։

1. աուդիենցիա – 1. լսում, ունկնդրում, ստուգալսում, 2. ընդունելություն (փոխաբերական իմաստով)
2. ապատիա – անտարբերություն

3. գեներացիա – արտադրում, վերարտադրում
4. դեօկուպացիա – ապագավթում
5. դիկտատոր – բռնակալ, բռնապետ
6. դիսկրիպտիվ – նկարագրական
7. դիստիլյացիա – թորում, զտում
8. դիսփլեյ – ցուցադրիչ
9. էքստրանացիա – արտաշիրիմում
10. էքստրավերտ – շփվող, հաղորդասեր, մարդամոտ
11. թրեյնինգ – 1. ուսուցում, վարժեցում,
2. վարժանք, դասընթաց
12. ինդուստրիա – արդյունաբերություն
13. ինքերտ – 1. անտարբեր, 2. անշարժ,
3. չեզոք
14. լոկալիզացիա – տեղայնացում
15. կոլաբորացիա – համագործակցություն, գործակցություն, աշխատակցություն
16. կոնսպիրատիվ – գաղտնի
17. մենտոր – դաստիարակ, ուսուցիչ,

- խորհրդատու, հովանավոր
18. մոմինալ – անվանական
19. պերսպեկտիվ(ա) – հեռանկար
20. պլանետարիում – աստղացուցարան
21. պրոտեժե – հովանավորյալ
22. պրոտեկցիա – հովանավորություն, պաշտպանություն
23. սելեկտիվ – ընտրովի, ընտրանքային, ընտրողական
24. սուբորդինացիա – ենթակայություն, ստորադասություն, ստորակարգություն
25. ստագնացիա – լճացում
26. ստաժ(յ)որ – փորձնակ
27. սքրլըրշիփ – կրթաթոշակ
28. վակցինացիա – պատվաստում
29. վերիֆիկացիա – 1. ստուգում,
2. հաստատում, վավերացում
30. տաբու – 1. արգելք, արգելանք,
2. արգելադրում, 3. արգելաբառ։

Նպաստենք հայերենի արդիականացմանը

Լեզուներն արտացոլում են արդի աշխարհի զարգացումները։ Հայոց լեզուն նույնպես համալրվում է ժամանակակից բառերով։ Դրանց մեջ լինում են նաեւ օտար բառեր, որոնք խորք են լինում հայերեն լեզվամտածողությանը։ Հայոց լեզուն իր բառակազմական ճկունությամբ հնարավորություն է տալիս ստեղծելու դրանց համարժեքները՝ նպաստելով հայերենի արդիականացմանը։

Ներկայացնում ենք օտար բառերի նոր ցանկ։ Հարկ է հետևողականորեն գործածել այս բառերի հայերեն համարժեքները։

1. գեոպոլիտիկ – աշխարհաքաղաքական
2. գեոպոլիտիկա – աշխարհաքաղաքականություն

3. դելեգացիա – պատվիրակություն
4. դեմագոգիա – ամբոխահաճություն
5. էզոցենտրիկ – եսակենտրոն
6. էքսպորտ – արտահանում
7. թայմեր – ժամանակաչափ
8. թրենդ – նորածել, նորածեւություն
9. իդեա – գաղափար, միտք
10. իմպորտ – ներմուծում
11. իմիտացիա – 1. նմանակում,
2. նմանակ
12. ինստիկտ – բնազդ
13. կոնկուրենցիա – մրցակցություն
14. կոնտրաստ – հակադրություն
15. մարկետոլոգ – շուկայագետ
16. մարկետինգ – շուկայագիտություն
17. մեյլ – էլիասցե (էլեկտրոնային հասցե), էլփոստ

18. մոդեռն – ժամանակակից, արդիական
19. մեյտրալ – չեզոք
20. մոթիֆիքեյշն – ժանուցում
21. պլագիատ – գրագողություն
22. պոպուլյար – 1. հանրամատչելի,
2. հանրաճանաչ
23. ռեալ – իրական
24. ռեադմիսիա – հետընդունում
25. սիզնալ – ազդանշան
26. փորինա – ցուցափեղկ
27. վիքենդ / ուիքենդ – շաբաթավերջ, շաբաթ-կիրակի
28. տարիֆ – սակագին
29. տենդեր – մրցույթ
30. տերիտորիա – տարածք, տարածություն։

Հայերենը պետք է պահպանենք ու զարգացնենք մենք՝ հայերս

Համաշխարհայնացման ժամանակներում նոր երևույթները հայերեն կոչելը, եզրույթների, կենցաղային իրերի անվանումների հայերեն համարժեքները գործածելը որոշ մարդկանց կարծիքով հնաոճ է։ «Ժամանակակից» եւ «նորածել» երեւալու մոլուցքը խանգարում է նկատել կարեւորը՝ հայերենի շահը։

Առաջարկում ենք օտար բառերի հայերեն համարժեքների հերթական ցանկը։ Կարդացե՛ք, վերընթերցե՛ք, գործածե՛ք դրանք, ձեզ շրջապատող մարդկանց հիշեցրե՛ք, որ հայերենը պետք է պահպանենք ու զարգացնենք մենք՝ հայերս։

1. ավանս – կանխավճար
2. բուստ – խոտվայր

3. բրուտալ – կոպիտ, վայրենի, վայրագ, դաժան
4. գարդերոբ – զգեստապահարան
5. գերբ – գինանշան
6. գիզանտ – հսկա, վիթխարի, աժդահա
7. գրադացիա – աստիճանավորում, աստիճանավորություն
8. գրանդիոզ – 1. վիթխարի, հսկայական, 2. փառահեղ, հոյակապ, մեծագոյու
9. դեֆորմացիա – ձեւախեղում, ձեւախախտում
10. դիապագոն – 1. ծայնածավալ,
2. ընդգրկում, ընդգրկույթ
11. դիետա – սննդակարգ
12. դիսկվալիֆիկացիա – որակազրկում

- կում
13. դոգա – 1. դեղաբաժին, 2. չափաբաժին
14. էլեգանտ – նրբագեղ, նրբակիրթ, նրբաճաշակ, նրբաոճ
15. էմանսիպացիա – ազատագրում, ազատագրություն
16. թասկ – 1. հանձնարարություն, առաջադրանք, 2. անելիք, խնդիր
17. իդենտիկ – նույնական
18. իմպերատիվ – հրամայական, կարգադրական
19. ինսուլտ – կաթված (ուղեղի)
20. ինստրուկցիա – 1. հրահանգ, ցուցում, 2. կարգադրություն
21. ինտոնացիա – 1. հնչերանգ, 2. առո-

- գանություն
22. ինֆլացիա – գնաճ
23. լիցենզիա – արտոնագիր, թույլտվություն
24. նոնսենս – անիմաստություն, անտություն, անհեթեթություն, դատարկաբանություն
25. ունիկալ – եզակի, անկրկնելի
26. պարտնյոր – 1. զուգընկեր, 2. գործընկեր, գործակից, 3. խաղընկեր, պարընկեր, մարզընկեր
27. ռեզորտ – հանգստյան տուն, առողջարան
28. փլեյլիստ – երգացանկ, տեսացանկ
29. ֆարմացեւտ – դեղագործ
30. ֆեստիվալ – փառատոն

Սրբոց Վարդանանց

Մայր Աթոռ

սկիզբը՝ էջ 1

... 428թ. Հայաստանում վերացվեց Արշակունյաց թագավորությունը: Հայաստանի՝ պարսկական տիրապետությանն անցած մասը դարձավ մարզպանություն, եւ մարզպան նշանակվեց Վասակ Սյունին: Պարսից թագավոր Հազկերտը՝ Վռամի որդին, խիստ մոլեռանդ էր իրենց կրոնի օրենքները պահելու հարցում եւ 449թ. մի հրովարտակ է հրապարակում, որով տերության սահմաններում գտնվող բոլոր հպատակներին պարտադրվում է զրադաշտական կրոնը (կրակապաշտություն):

Այս ընթացքում հայ նախարարները, սպարապետ Վարդան Մամիկոնյանի եւ կաթողիկոս Հովսեփ Զողոցմեցու գլխավորությամբ, Արտաշատում ժողով են գումարում, որտեղ Հազկերտին պատասխան են գրում. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները, ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ եւ ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ո՛չ էլ որեւէ այլ դառն հարված: Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքում են, եւ մեր մարմինները քո առաջ են, քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես: Եթե այս հավատի մեջ թողնես, ո՛չ երկրի վրա ուրիշ տեր կընդունենք քո փոխարեն եւ ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստված՝ Հիսուս Քրիստոսի փոխարեն, Որից բացի ուրիշ Աստված չկա»:

Պատասխանը խիստ զայրացնում է Հազկերտին, եւ 451թ. գարնանը պարսկական զորքը, Մուշկան Նյուսալավուրտի գլխավորությամբ, մտնում է Հայաստան եւ հասնում Արտազ գավառ՝ բանակ դնելով Տղմուտ գետի աջ ափին: Պարսկական զորքը 200 հազար էր՝ հայկականից 3 անգամ ավելի: Մայիսի 25-ին զորքերը պատրաստվում են վճռական ճակատամարտի: Հոգեւորականները մկրտում են չմկրտված անձանց: Բոլորը Սուրբ Ավետարանի վրա երդումով միաբանվում են, որով Հայոց բանակատեղին նմանվում է շարժական եկեղեցու՝ Սուրբ Ավագանով, Ավետարաններով, խաչերով, սրբերի նշխարներով եւ անգամ եկեղեցական նվիրապետությամբ՝ կաթողիկոսից մինչեւ սաղմոսասաց: Մայիսի 26-ին սկսվում է ճակատամարտը: Ավարայրում հերոսաբար մարտնչելուց հետո իր զինվորների հետ ընկնում է Վարդանը եւ նրա հետ երեւելի նախարարներ՝ իրենց տոհմակից ազնվականներով՝ 296 հոգի...



Հայ եկեղեցին երախտագիտությամբ սրբացրել է Ավարայրի 1036 նահատակներին՝ Վարդան Ջորավարի գլխավորությամբ: Ցավոք սրտի, պատմությունը չի պահել բոլորի անունները: Հայտնի են միայն 9 զորականները.

1. Քաջ Վարդան Մամիկոնյան՝ 133 համհարզներով,
2. Կորովի Խորեն Խոռխոռունի՝ 19 ընկերներով,
3. Արի Արտակ Պալունի՝ 57 ընկերներով,
4. Ջարմանալի Տաճատ Գնթունի՝ 19 ընկերներով,
5. Իմաստուն Հմայակ Դիմաքսյան՝ 22 ընկերներով,
6. Հրաշակերտ Ներսես Քաջբերունի՝ 7 ընկերներով,
7. Մանուկ Վահան Գնունի՝ 3 ընկերներով,
8. Արդար Արսեն Ընծայունի՝ 7 ընկերներով,
9. Առաջադեմ Գարեգին Սրվանձտյանց՝ 2 եղբայրներով եւ 18 ընկերներով:

Վարդանանց քաջերին Սուրբ Ներսես Շնորհալի հայրապետը ձոնել է «Նորահրաշ» շարականը՝ ամեն քառասուղ սկսելով նահատակ մի իշխանի անունով:

Ճակատամարտին մասնակից էին նաեւ հոգեւորականները, ովքեր իրենց անմնացորդ ծառայությունը մատուցեցին Հայ եկեղեցու, հավատքի ու հայրենիքի պաշտպանությանը: Նրանցից էին Սուրբ Ղեւոնդյանները: Սուրբ Ղեւոնդյանց մարտիրոսությունը տեղի ունեցավ Սուրբ Վարդանանց նահատակությունից երեք տարի երկու ամիս հետո, բայց եկեղեցական տոնացույցի մեջ սկզբում է դրված Ղեւոնդյանց տոնը՝ իբրեւ Վարդանանց պատերազմի գաղափարախոս նախապատրաստողների:

Բուն բարեկենդան

«Բարեկենդան» նշանակում է բարի կենդանություն, ուրախություն, խրախճանք, առատ ուտելիքներով վայելքի օր: Գլխավոր շաբաթապահքերին նախորդող կիրակի օրը կոչվում է բարեկենդան, եւ այդ առթիվ թույլատրվում է մի փոքր ավելի ուտել: Սակայն բարեկենդանների մեջ հատկանշական է Մեծ Պահքի նախընթաց կիրակի օրը (այս տարի՝ փետրվարի 27-ին), որ կոչվում է Բուն Բարեկենդան: Այս օրը մարդիկ վայելում են առատ ուտելիք՝ ճոխ սեղաններ պատրաստելով ու զանազան խրախճանքներ կազմակերպելով: Արեւմուտքում Բարեկենդանը՝ իրենց լեզվով «Կարնավալը»-ը, նշվում է բացառիկ շուքով եւ հանդիսությամբ: Տեղի են ունենում զանազան տողանցքներ ու ցուցադրություններ, ինչպես նաեւ՝ ժողովրդական խրախճանք:

Մեծ պահքի շրջան

Հայ եկեղեցու ծիսակարգի համաձայն՝ Բուն Բարեկենդանին հաջորդող երկուշաբթից (այս տարի՝ փետրվարի 28-ից) սկսվում է Մեծ Պահքի շրջանը: Այն տեւում է քառասուն օր՝ մինչեւ Ծաղկազարդի կիրակին (այս տարի՝ ապրիլի 10-ին) նախորդող շաբաթ օրը, որին հաջորդում է պահոց մի շրջան եւս՝ Ավագ Շաբաթվա Պահքը, որի ընթացքում եկեղեցին պատրաստում է հավատացյալ ժողովրդին արժանավորապես եւ մեծագույն երկյուղածությամբ մոտենալու Սուրբ Հաղորդության Սեղանին՝ հռչակելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսը (այս տարի՝ ապրիլի 17-ին): Պահքի այս շրջանում սահմանափակում է դրվում սննդի որոշ տեսակների վրա, հիմնականում՝ կենդանական ծագում ունեցող, փոխարինելով այն «ճաշի» այլ տեսակներով՝ ավելի հարուստ ու սննդարար, անանց ու պտղաբերող, որոնք ավետարանական պատգամներն ու առակներն են: Մեծ Պահքի շրջանի գրեթե բոլոր կիրակիներին, ըստ Հայոց Տոնացույցի, ավետարանական առակներ են ընթերցվում, որոնք քրիստոնյայի համար զարթուցիչ կոչմանի դեր պիտի կատարեն: Այդ կոչմանը եկեղեցու զանգերի նման հավատացյալներին հրավիրում է արթուն կյանքի: Այս շրջանում է, որ յուրաքանչյուր ոք փորձում է զղջումով ու ապաշխարությամբ մեղքից հեռանալ ու մաքրվել եւ «իմաստուն կույսերի նման» միշտ պատրաստ լինել: Լեռան քարոզում Քրիստոս պատվիրում է «կատարյալ լինել, ինչպես մեր Երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. 5:48): Պահքի շրջանն այդ առումով նաեւ կատարելության, մերքին ներդաշնակության տանող մի շրջան է. այն, ինչ կորցրեցին մեր նախածնողները եղեմական պարտեզում, Քրիստոս մեզ վերադարձրեց: Աստծո պատկերն ու նմանությունն այդ կատարելություններն են, որոնց ձգտելով՝ քրիստոնյան կարող է Վերջին փողի հնչելու ժամանակ Պողոս առաքյալի խոսքերով ասել. «Բարի պատերազմ մղեցի, ավարտեցի կյանքիս ընթացքը, պահեցի հավատը: Այսուհետ ինձ մնում է միայն սպասել արդարության պսակին, որ Տերը՝ արդար Դատավորը, իբրեւ հատուցում, ինձ կտա դատաստանի օրը: Եվ կտա ոչ միայն ինձ, այլ նաեւ բոլոր նրանց, ովքեր սիրով սպասում են Տիրոջ հայտնվելուն» (Բ Տիմ. 4:7-8): Ամեն մի հավատացյալի համար պահքի շրջանը մեղքի կրակոտ նետերից ազատվելու առիթ է: Ինչպես Ադամը մեղանշելուց հետո չխոստովանեց ու պատուհասից չազատվեց, այնպես էլ ամեն ոք, եթե մեղանշելուց հետո չխոնարհեցնի իր անձը՝ խոստովանելով իր մեղքերը, դրանց պատուհասներից չի խուսափի: Պահքով եւ աղոթքով քրիստոնյան ի զորու է չարի փորձություններին դիմանալու եւ հաղթանակած դուրս գալու:

Տեառնընդառաջ

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է Տեառնընդառաջի տոնը, որը խորհրդանշում է 40-օրյամանուկ Հիսուսի ընծայումը տաճարին:

Տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ՝ Սուրբ Գայանե վանքում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության մասնակցությամբ կատարվեց Երեկոյան ժամերգություն:

Հավարտ ժամերգության, հանդիսապետությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարարապետ Գերաշնորհ Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանի, տեղի ունեցավ նախատոնակ, ապա կատարվեց նաեւ տարվա առաջին Անդաստանի արարողությունը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը:

Արարողությունից հետո եկեղեցականաց թափորն ուղղվեց դեպի Մայր Աթոռի միաբանական շենքի շրջափակ, ուր, ներկայությամբ բազում հավատացյալ հայորդիների, ձեռամբ Մուշեղ Սրբազանի, վառվեց Տեառնընդառաջի խարույկը, որի շուրջ համախմբված Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով:



Փետրվարի 14-ին 40-օրյա մանուկ Հիսուս Քրիստոսի տաճարին ընծայման տոնին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Սուրբ Գայանե վանքում մատուցվեց Սուրբ Պատարագ:

Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի տնօրեն հոգեշնորհ Տեր Գարեգին վարդապետ Համբարձումյանը:

Սուրբ Պատարագի իր քարոզում Հայր Սուրբը, անդրադառնալով տոնի խորհրդին, մասնավորաբար կարեւորեց հույսի խորհուրդը, որով Սիմեոն Ծերունին երեք հարյուր եւ ավելի տարիներ սպասում էր Փրկչին տեսնելուն՝ հորդորելով հավատացյալներին նույն հույսով իրենց հայացքներն անշեղորեն ուղղել առ Աստված:

Աղոթք վերառաքելով առ Աստված՝ Հայր Սուրբը մաղթեց հավատավոր ժողովրդին, որ Սիմեոն Ծերունու հույսը յուրաքանչյուրի սրտում պտղաբերի, մշտապես լինեն խաղաղության մեջ եւ մի օր երանությունն ունենան ասելու՝ «...ինձ աչքերը տեսան քո փրկությունը, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ» (Ղուկաս Բ 30-31):

Տեառնընդառաջի տոնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակվել է որպես նորապսակների օրհնության օր: Այս կապակցությամբ փետրվարի 14-ին, եկեղեցիներում մատուցվող Սուրբ Պատարագի ավարտին, կատարվեց նորապսակ զույգերի օրհնության կարգ:



Մեծերի մեծ կրթերը

Ֆիեսթա՝ չևերված սիրելիների համար

Ազնեսա Ֆոն Կուրովսկի եւ Էռնեստ Յեմինգուեյ



1918 թվականի ամռանը պատանի Էռնեստ Յեմինգուեյը գալիս է Իտալիա, ուր այդ ժամանակ արյունահեղ մարտեր էին բռնկվում: 19-ամյա սկսնակ գրողը, որ դրանից քիչ առաջ թողել էր Կանգաս Սիթիի «Սթար» թերթի թղթակցի տեղը, նետվում է պատերազմի խորխորատը, որը նրան թվում է հեթիաթային եւ ռոմանտիկ ֆուտբոլային մրցախաղ: Նրա համար դա էլ հարմար առիթ էր՝ ընտանիքից, իրեն դեռելս երեխայի տեղ դնող մոր բռնակալական իշխանությունից փախչելու համար: Չախ աչքի թույլ տեսողության պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելով՝ Էռնեստ Յեմինգուեյը, վերջիվերջո, դիմեց Կարմիր խաչին, որտեղ նրան պատրաստակամությամբ ընդունեցին: Բարձր հասակի եւ ազդեցիկ արտաքինի համար նրան նշանակում են Կարմիր խաչի կամավորների դասակի ավագ մի շքերթում, որն անցավ Դինգերորդ ավանդույթով՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Վիլսոնի առջև: Իտալիայի հյուսիսում, Պյավեի ձախատում «խիզախ մարտիկ» գոռոզությունը մի քիչ կոտրվեց: Աշխատանքը խոհանոցում, զինվորների օրապահիկների բաժանումը, վիրավորների ու սպանվածների տեղափոխումը տհաճ եւ անշնորհակալ հանձնարարություններ էին: Մի անգամ, երբ Էռնեստը գտնվում էր թաքստոցում, նրանից մեկ մետրի վրա արկ ընկավ: Նրա կողքին հնձվածի նման տապալվեց մահացու վիրավոր մի զինվոր: Երիտասարդ ամերիկացին զգաց, թե ինչպես էր իր ոտքերով հոսում տաք արյունը: Յեմինգուեյին հասցրին դաշտային զինվորական հիվանդանոց, վիրակապեցին, բուժօգնություն ցույց տվեցին, ապա զննվելով ուղարկեցին Միլան, որտեղ նրանից հեռացրին վերջին բեկորները: Իր խոսքերով՝ նրա մարմնի մեջ էր խրվել արկի 227 բեկոր, բայց, չնայած դաժան ցավին, նա իբր սողացել էր դուրս՝ մի խալկացի զինվորի փրկելու համար: «Ես Իտալիայում վիրավորված առաջին ամերիկացին եմ», - հպարտորեն հայտարարում է նա տուն գրած նամակում:

Միլանի Կարմիր խաչի զինվորական հիվանդանոցը տեղավորված է մի մեծ, գեղեցիկ տան մեջ՝ հանրահայտ «Լա Սկալայից» մի բանի մետրի վրա: Հիվանդասենյակները հարմար են, ընդարձակ: Տասնութ գթության քույրերը հոգ են տանում դժբախտ վիրավորների մասին, որոնք այդ ժամանակ փորձարթիկ են: Հաշմանդամի բազկաթոռով եւ վիրակապած գլխով Յեմինգուեյի հայտնվել-

ը մեծ խլրտում է առաջացնում հիվանդանոցի անձնակազմի կամանց շրջանում:

Յեմինգուեյը հրապուրիչ է, գորովահարույց եւ այնքան երիտասարդ: Նրան կթուլատրվի ամեն ինչ: Էլսի Մաք-Դոնալդը՝ անորոշ տարիքի բուժքույրը, հետ չի մնում մյուսներից: Հիվանդանոցում զինին եւ օղին խստորեն արգելված են: Բայց ոչ Յեմինգուեյի համար, որին Էլսին պարբերաբար «ընդհատակից» շշերի բազմություն է փոխանցում, իսկ նա աճապարհանքով դրանք խցկում է մահճակալի տակ՝ ավագ բուժքրոջ մոտենալու պահին:

Մի գեղեցիկ օր գաղտնիքը բացահայտվում է, եւ երկչոտ, զիջող Էլսին խիստ նկատողություն է ստանում: Սակայն, նա առաջվա պես երես է տալու իր սիրելիին: Էլսին առաջվա նման ինքն է նրան տանում ռենտգենյան կաբինետ: «Յեմինգուեյը ջարդված տիկնիկ էր, որին Պյավեի ափերից բերել էին նորոգելու», - հետագայում կարմրելով կասի նա: Բայց եւ այնպես, երիտասարդ ամերիկացուն սիրահարված Էլսի Մաք-Դոնալդն իր բոլոր գործընկերուհիների նման երկրորդ պլան կզնա հիասքանչ, հմայիչ Ազնեսա Ֆոն Կուրովսկու առջև: Ազնեսան, որ ծնվել էր Փենսիլվանիայում 1892 թվականի հունվարի 5-ին, յոթ տարով մեծ էր Յեմինգուեյից: Լեհ-գերմանական ծագումով նրա հայրը, տարագրվելով ԱՄՆ, օտար լեզու էր դասավանդում Նյու Յորքի Բերլինգ դպրոցում, իսկ մոր պապը՝ Սեմյուել Բեքլի Յուլաբերդը՝ ակնամկոր ռազմական գործիչ էր: Ազնեսան ստացել էր անկախ, միանգամայն ժամանակակից դաստիարակություն: 1910 թվականին, հոր մահից հետո նա տեղ գտավ գրադարանում, բայց ծանձրանում էր աշխատանքի միօրինակությունից: «Ես բնագրաբար ձգտում էի ինչ-որ ավելի հետաքրքիր բանի, - կասի նա հետագայում: - Սիս ինչու որոշեցի բուժքույրություն սովորել: 1917 թվականի հուլիսին, ստանալով վկայական, ես խնդրեցի ինձ Եվրոպա ուղարկել»:

Նա ստիպված եղավ սպասել մեկ տարի: Այդ անհամապատասխանությունում, երբ ամեն տեղ լրտես էին որոնում, ցանկացած եվրոպական ազգանուն կասկածներ էր հարուցում: Ատլանտյան օվկիանոսով երկարատեւ եւ վտանգավոր նավարկման ընթացքում Ազնեսան չփվում է բելգիացի սպաների խմբի հետ: Երիտասարդները հիացած էին շագանակագույն մագերով եւ զուլալ հայացքով այդ գեղեցիկ երիտասարդ կնոջով, որը բացահայտ հայտարարում էր, որ ինքն ուզում է վայելել կյանքը հատկապես տղամարդկանց շրջանում: Գայթակղության այդ ուժն իր վրա է փորձում Ամրի Սերանո Վիլարդը՝ Յեմինգուեյի հիվանդասենյակային հարեւանը Միլանի զինվորական հիվանդանոցում: Յեմինգուեյը նա էլ դառնալու է նրա հերթական զոհը: «Նրանից ինչ-որ փայլ էր ծառագում, որը չկար մյուս բուժքույրերի մեջ: Ես հիշում եմ նրա շլացուցիչ ճերմակ ուրվապատկերը, նրա եռանդովը: Բոլոր տղաները խելքները կորցնում էին նրա համար: Սկսել էին նրան Ազգի, երբեմն էլ Ազ կոչել: Եվ ես նրանցից մեկն էի: Ես ամերեականայելի ջանքեր ներդրեցի, որ հասնեն միասին ընթերցելու նրա համաձայնությանը»: Ամրի Սերանո Վիլարդը ստիպված կլինի բավարարվել միայն սայլակով ռոմանտիկ ուղեւորությամբ եւ բարեկամական ընթրիքով քաղաքային ճաշարանում:

Մի անգամ, մտնելով Յեմինգուեյի հիվանդասենյակը, նա Ազնեսային կտեսնի վիրավորի սնարին: Ամերիկացին բուժքրոջ ձեռքը սեղմում է իր ձեռքերի մեջ: Վիլարդի բոլոր հույսերը խորտակվում են: Նա պետք է զիջի հակառակորդին, որի արտոնությունները ունանց վրդովեցնում են: Բավական է Էռնեստին խնդրել նարնջի հյութ, մի բաժակ կաթ՝ քարտային համակարգի ժամանակնե-

րում շքեղություններ, եւ դրանք հայտնվում են նրա սկուտեղի վրա: Նրա համար չկա ոչ մի օրակարգ, ոչ մի դադար: Նրա հմայքը վերացնում է բոլոր սահմանափակումները:

Յեմինգուեյն ուժգնորեն հրապուրում է խելացի, նուրբ, հուճողով լի Ազնեսա Ֆոն Կուրովսկուն: Բայց նա բավական խորաթափանց է, որ հասկանա նրա բնավորության մանկայնությունը, նրա ականա ենթարկվելը մորը, որը լիակատար իշխում է իր խռովարար-որդու վրա: Իմանալով 1961 թվականի Քեթչումի իր ազարակատանը գրողի ինքնասպանության մասին՝ Ազնեսան քիչ է զարմացել: «Դա նրա մեջ կար», - թախիծով հավաստել է նա:

Ազնեսայի վերջերս հրապարակված օրագրում կարելի է հետեւել այդ երկու՝ իրարից այնքան տարբեր մարդկանց կրքի փուլերին: Գիշերները հիվանդասենյակներում կազմակերպվում են աղմկոտ խնջույքներ: Յեմինգուեյին հաջողվում է դուրս սահել փրփրում աստի բերելու: Բոլորը խնում են, բուժքույրերը ուկուլելե-կիթառ են ծնգոնգացնում, ունանք համբուրվում են, սիրախաղով զբաղվում: Եվ ծիծաղում են Յեմինգուեյի, նրա ձեռնափայտի վրա, որին նա ցուցադրաբար հենվում է, նրա շատ լավ արդուկված համազգեստի վրա: Ազնեսան առիթը բաց չի թողնում միանալու ծաղրողների խմբին: Դա Յեմինգուեյին խիստ զայրացնում է:



Ստադիոն չլինելով ոչ մեկի հետ կիսել իր հաղթանակը՝ նա փոթորկում է, երբ Ազնեսան մի գեղեցիկ օր հայտարարում է, որ մեկնում է Սթրեզզա՝ հանգստանալու: Յեմինգուեյը ոտքերով տրորում է իր հագուստները, կոպտում բուժքույրերին, ձեւացնում է, որ մտադրվում է Ազնեսային վերադարձնել այն մատանին, որն Ազնեսան նրան նոր է նվիրել: Մատանին, որը բացահայտորեն ցույց է տալիս, որ նրանց սերն արդեն կարճատեւ հրապուրանք չէ:

1918 թվականի հոկտեմբերի 7-ին Միլանն արթնանում է ճիշերից եւ չխնչխնչանքի ծայրերից: Ամբոխը ողողել էր փողոցները. ըստ լուրերի՝ կայսրը դաշնակիցներին հաշտություն էր առաջարկել: Մի քանի հիվանդների հետ Ազնեսան եւ ընկերուհիները նետվում են դեպի պատուհանը: Յեմինգուեյը մնում է անվրդով: Նա խնդրում է իր համար լոգարանը ջուր լցնել, մռայլ եւ փքված դեմքի արտահայտությամբ ընկղմվում է փրփուրի մեջ եւ հայտարարում. «Պատերազմը շարունակվում է: Այս բոլորը կարմիրբանակայինների եւ համայնավարների խաղերն են»: Նա կատաղել էր ինքն իր վրա, որ ինքը չէր առաջինը հաղորդել իր սիրելիին այդ իրադարձության մասին: Այդ նույն օրագրում Ազնեսան նշում է. «Ճակատամարտ Էռնիի հա-

մար: Լավ ուրախացա»:

Բուժքույրն ու սիրուհին նաեւ աշխատում էր փոխել նրա սովորությունները: Մի՞թե Էռնեստը չէր խոստացել նրան այսուհետ միայն մի փոքրիկ բաժակ անխոսնի օղի խմել ընկերների հետ պոկեր խաղալիս: Ազնեսան սիրահարված է, բայց կույր չէ: Նա հաճախ կընճաղատի Յեմինգուեյի անկայուն, նույնիսկ անարդարացի եւ չար բնավորությունը: Եվ գլխավորը՝ եսասեր: Նրա աչքերում «փոքրիկը» ընդամենը «Dear Bambino» («Թանկագին տղա») է: Բայց նրանց տարիքի տարբերությունը երբեք չի կարող խոչընդոտ լինել: «Նա գոնե մտածել էր, թե ինչպես կընդուներ իր ընտանիքը, եթե ես համաձայնեի ամուսնանալ նրա հետ», - ինքն իրեն հարցնում է Ազնեսան: Էռնեստը «նրա գոյության լույսն էր», բայց նա թող զսպի իր՝ երես առած երեխայի խելահեղ կամակորությունները: Տալյատելլե ճաշատեսակի եւ վալպոլիչելայի ցանցապատ շշերի շուրջ խնջույքները, հարբած զինվորների պարերը, որոնք զինվորական հիվանդանոցի տնօրինության կողմից որակվում էին որպես «ծայրահեղ գռեհիկ», առաջվա պես նրան թվում էին շարունակությունը պատերազմի սարսափներից հեռու, ժամանակի մեջ չսահմանափակված արձակուրդների, հասունացումը հետաձգելու եղանակ, որը ենթագիտակցաբար նրան սարսափեցնում է: Հարազատներին գրած նամակներում Յե-

մինգուեյը սիրային գործերի մասին լռություն է պահպանում: Գուցե նա վախենում է մոր առարկություններից: Գուցե նա գտնում է, որ այդ պատմությունը վերաբերում է միայն իրեն: Ազնեսա Ֆոն Կուրովսկու ամուսնը երբեք չի հիշատակվում: Յեմինգուեյի զսպվածությունը չի՞ բացատրվում արդյոք նաեւ Ազնեսայի դիրքորոշմամբ: Նա Էռնեստին պատմել է խորհրդավոր դոկտոր Ս-ի մասին, որին նա թողել է Նյու Յորքում, լեյտենանտ Կոլենի մասին՝ մի երիտասարդ բելգիացու, որ նրան հանդիպել է նավի վրա եւ այնքան երկար զբաղեցրել նրա մտքերը: Ազնեսան չէր մոռացել նաեւ իտալացի կապիտան Էնրիկ Սերանոյին:

Այսպիսով, Ազնեսան բոլորովին էլ միամիտ անմեղ աղջիկ չէ, եւ Յեմինգուեյը անզուլություն է դրսևորում՝ տրվելով սիրո քաղցրամուշ ցնճությանը: Երբ Ազնեսան նրան ասում է իր նյույորքյան «փեսացուի» հետ կապերը խզելու մասին, նրա ուրախությունն այնչափ սահմաններ չունի: «Նա ինձ սիրում է, Բիլ», - խանդավառությամբ գրում է նա իր ընկերներից մեկին՝ անմիջապես նրան առաջարկելով լինել իր եւ Ազնեսայի՝ Միացյալ Նահանգներում կայանալիք հարսանիքի խաչեղբայրը:

Հարունակությունը՝ էջ 9

Ֆիեստա՝ չներված սիրելիների համար Ազնեսա Ֆոն Կուրովսկի եւ Էռնեստ Յեմինգուեյ

սկիզբը՝ էջ 8

Սակայն նրա առաջին սեքսուալ փորձերն առավել քան երկչոտ եղան։ Կանանց հետ իր կապերում, որոնք հաճախ մարմնավաճառներ էին, նա միշտ խաղում էր ենթակայի դեր։

Յեմինգուեյի Ռիչարդսոնը, Պոլինա Պֆայֆերը, Մարթա Գելհորնը եւ Մերի Ուելշը՝ նրա չորս «օրինական» կանայք այդ մասին իմանում են իրենց փորձից ելնելով։ Ազնեսա Ֆոն Կուրովսկին՝ առաջին եւ գլխավոր դաստիարակչուհին, կնպաստի նրա սեռական «թուլությանը»։ Սեքս, հարբեցողություն, ծուլություն, ընթերցանություն, զբոսանքներ Ազնեսայի հետ Գալերեայի կամարաշարերի տակ։ Յեմինգուեյը հաճույքով է մտնում բուժքրոջ «սիրելի» կերպարի մեջ։ Բայց 1918 թվականի նոյեմբերին տեղի ունեցավ հանկարծահա մի իրադարձություն, որը դժվար էր զինատարար անվանել։ Ազնեսային տեղափոխում են Ֆլորենցիայի զինվորական հիվանդանոցը։ Նոյեմբերի 11-ին մեկնելուց 10 օր անց, նա վերադառնում է Միլան։ Յեմինգուեյը հուսահատության մեջ է։ Նա պահանջում է, որ Ազնեսան վերջնականապես միանա իր հետ։ Ազնեսան չեղվում է ուղիղ պատասխանից՝ չնայած երդվում է սպասել նրան։ Բայց ահա նա նորից հեռու է։ Ֆլորենցիայում իսպանական գրիպն է մոլեգնում։

Միլանում նա անհամբերությամբ սպասում է Ազնեսայի նամակներին։ «Ես Ձեզ կարոտում եմ։ Ձեր նկատմամբ սարսափելի սով եմ զգում։ Ես ոչինչ չեմ մոռացել այն զիջերներից... Աշխատանքի ժամանակ իմ մտքերը թռչում են Ձեզ մոտ, և այդ ժամանակ ես հայտնվում եմ լիակատար խառնաշփոթության մեջ։ Ես շատ կուզեի Ձեզ հետ լինել...»։ Ազնեսայի նամակներում կան նաեւ բազմաթիվ մանրամասներ նրա առօրյա կյանքից, մայրական խորհուրդներ «փոքրիկին» այն մասին, թե ինչպես պահպանել առողջությունը, իր սիրային կապերի անթաքույց ակնարկներ, իր ընդգծված ճաշակը իտալացի գեղեցիկ սպաների հանդեպ։ Ողջամիտ կլինի արդյոք կյանքը կապել արտասահմանցու հետ։ Յեմինգուեյը ոչինչ չի ցանկանում հասկանալ։ Եթե նա գոնե ուշադրություն դարձներ Ազնեսայի առաջարկին, որը նրան ասել էր. «Եթե դուք հանկարծ դադարեցնեք ինձ գրել, թող այդպես էլ լինի։ Ոչ արցունք, ոչ փսիսանք», - եւ նրանք կկարողանային մնալ բարի ընկերներ եւ միայն քնքշանքով հիշել անկրկնելի պահերը։

1918 թվականի նոյեմբերի 9-ին Ազնեսան կրկին Միլանում է։ Կարճատեւ հանդիպում։ Նրա տրամադրության տակ միայն մի քանի ժամ է։ Էռնեստը կազդուրվել է, պատրաստ է վերադառնալ Միացյալ Նահանգներ։ Կգա՞ նա արդյոք իր մոտ։

1919 թվականի հունվարի 4-ին բուժքույրն աշխատանքի է անցնում Տորե դի Մոստայի հիվանդանոցում։ Որոշ ժամանակ

անց սկսվում է նրա եւ հերցոգ Դոմինիկո Կարաչոլոյի՝ իտալացի ճարպիկ սպայի սիրավեպը, որ ազդեցիկ եւ տոմսիկ նեապոլյան մի ընտանիքի ժառանգորդն էր։ Ազնեսան այնքան վստահ է իտալացու զգացմունքների անկեղծության մեջ, որ համաձայնում է նրա պահանջով գոհաբերել Յեմինգուեյի նամակները։

Դոմինիկոյի մայրը, որ նույնքան անհողորդ էր, որքան եւ Յեմինգուեյի-նը, կատաղի հակառակվում է որդու եւ այդ «թեթեւ վարքի տեր օտարուհու» ամուսնությանը։ 1919 թվականի հունվարին Յեմինգուեյը վերջապես վերադառնում է Միացյալ Նահանգներ։ Նախկին պատանին փոխվել է։ Նա հասունացել է եւ հակառակ իր պարծենկոտությանը՝ իր վրա է կրում պատերազմում ապրած տառապանքների ակնհայտ դրոշմը։ Առաջվա նման Ազնեսայով տարված՝ այժմ նա տրվում է ընդունելության ցնձությանը, որը ցուցաբերում են նրան Օուկ Փարքի՝ նրա հարազատ քաղաքի բնակիչները, ընտանիքը, որոնք արդեն լսել են նրա սխրամքների, վիրավորվելու միանգամայն գունազարդված վարկածը։ Երբ ավարտվեցին շքերթները, հայրենասիրական ճառերը, հարցազրույցները, Յեմինգուեյը կրկին գտավ իր հոր՝ դոկտոր Բլաբենս Յեմինգուեյի շրջապատը։ Որդու կողմից իդեալականացած, արիության օրինակ դոկտոր Բլաբենսը 1928 թվականին, չկարողանալով ձեռնպահ մնալ չնտածված ֆինանսական սպեկուլյացիաներից, վերջ է տալիս կյանքին։ Էռնեստը շարունակում է նամակագրությունն Ազնեսայի հետ։ «Պետք չէ ինձ այդքան գրել», - զգուշացնում է Ազնեսան նրան։ 1919 թվականի մարտի 1-ին նույն նամակում Ազնեսան հավատացնում է. «Ես բոլորովին այն կատարյալ կինը չեմ, որին Դուք պատկերացնում եք։ Իմ իսկական բնույթը, այն, որ միշտ իմ սեփականությունն էր, սկսում է դրսևորվել։ Ես ինձ զգում եմ շատ «cattiva» (չար), այնպես որ մնաս բարով, փոքրիկս։ Մի բարկացեք եւ ամենայն լավ։ Սիրով Ազգի»։ «Cattiva»-ն լքեց նրան։ Նա այնքան է ընկճված դրանից, որ տենդի ուժեղ նոպայից տապալված՝ անկողին է ընկնում։ Մարսելիցան Յեմինգուեյի քույրը եւ իրենց մայր Գրեյսի հավատարմագույն դաշնակցուհին, հրճվանքի մեջ է։ Առանց ներողանմության հետեւելով եղբոր արկածներին՝ նա բուժքրոջ նկատմամբ չի տածում ոչ մի բարեհոգի զգացում՝ չնայած ոչ մի անգամ նրան չի հանդիպել։ Իսկ Յեմինգուեյը՝ «տառապանքների մահճում» պառկած, խորհրդածում է վրեժխնդրության մասին։ «Ես երազում էի, - պատմում է նա Էլսի Մաք-Դոնալդին, որն առաջվա պես Իտալիայում էր, - որ Նյու Յորք գալով՝ Ազնեսան կսայթաքի նավի սանդուղքների վրա եւ կթափվեր նրա բոլոր ատամները»։ Յեմինգուեյի 15-ին նոր նամակ երիտասարդ կնոջից։ Նրա սիրելիանը կապերը խզել է իր հետ... Յեմինգուեյը հավիւմ է կարեկցանքից. «Խեղճ աղջիկ»։ Բայց այդ բռնկումը երկար

չի տևում. «Ոչինչ չեմ կարող անել։ Ես նրան սիրում էի, իսկ նա ինձ խաբեց»։ «Ես հավատում եմ Ձեզ։ Դուք ողջամիտ կլինեք, - գրեց նրան Ազնեսան, - Ձեր առջեւ հիմնալի կարիերա է բացվում, որին արժանի է Ձեզ նման մարդը։ Ես դա Ձեզ ցանկանում եմ ամբողջ սրտով, ամբողջ սիրով»։ Յեմինգուեյը միանգամից չի կարողանա հուսահատությունից ազատվել. նա սփոփանք կփնտրի ակոհողի մեջ։ Եվ սոսկ որոշակի մխիթարություն կգտնի գրելով։ Ստեղծագործական տոջորման մեջ Ազնեսայի գեղեցիկները աստիճանաբար ծածկվում է մոռացության մշուշով։ Բայց վերքը չի ապաքինվում։ մի քանի տարի անց (նա ամուսնացած էր Յեմինգուեյի հետ, բայց արդեն սկսում էր ծանծրանալ նրանից) նա զանգում է Ազնեսային, որն ի պատասխան 1920 թվականի դեկտեմբերի 22-ին նամակ է ուղարկում՝ վերջինը, որ ստացավ նրանից, որտեղ նա հիշում է անցյալը, Իտալիան, իրենց բարեկամությունը. «Չկա հին բարեկամությունը նորոգելուց ավելի հրաշալի բան։ Չէ՞ որ մենք բարեկամներ ենք, ճիշտ չէ՞։ Ինչպե՞ս է առաջ գնում Ձեր վեպը։ Ե՞րբ կկարդամ։ Ինչպես եմ հպարտանում, որ կարող եմ ասել. «Էռնեստ Յեմինգուեյը»։ Ախ, այո։ Ես նրան իսկապես ճանաչում էի։ Դա պատերազմի ժամանակ էր»։ Թողնելով Իտալիան՝ Ազնեսան, որ առաջվա պես աշխատում էր Կարմիր խաչում, գործուղվեց Ռուսինիա, ապա Չայիթի։



1928 թվականին Ազնեսան ամուսնանում է Յովարդ Փրեսթոն Գարդների ամերիկյան պետդեպարտամենտի ֆինանսական բաժնի աշխատակցի հետ, ամուսնալուծվում է, ապա ամուսնանում Ուիլյամ Սթենֆիլդի՝ երեք երեխայի հայր համեստ մի այրի տղամարդու հետ։ Իր անդուլ ճառապարհորդությունների ընթացքում նա այլևս առիթ չի ունենա հանդիպելու Էռնեստ Յեմինգուեյին. «Մենք՝ ես եւ ամուսինս, Կուբայում էինք, որտեղ ապրում էր Յեմինգուեյը։ Ես իմացա, որ նա շատ է խմում»։ Ինչպե՞ս նա արձագանքեց 1929 թվականին «Չրաժեշտ գեմքին» գրքի լույսընծայմանը։ Նույնացրե՞ց իրեն Բեթթին Բարբլիի՝ բուժքրոջ սրտառու կերպարի հետ, որ մեռնում է տեաական անձրեւի ժամանակ ծննդաբերությունից։ 1976 թվականին Ամրի Սերանո Վիլարդը, որ կիսում էր Յեմինգուեյի ճակատագիրը Միլանի գինվորական հիվանդանոցում, մեկնում է Ֆլորիդա, որտեղ այժմ ապրում է Ազնեսան։ Կինը, որ նրա առջեւ բացում է դուռը, այժմ 84 տարեկան է։ Ամրին չի կարող թաքցնել ցնցումը, ավելի ուշադիր է նայում նրան։ Դիվանդ, զառամյալ Ազնեսան բայց եւ այնպես պահպանել է փառահեղ երիտասարդության քայլվածքը եւ իր դյուբլի ներքին լույսը։ «Ես Բեթթին Բարբլին չեմ, - հայտարարում է նա անմիջապես։ Ես երբեք չեմ եղել այդ կամազուրկ թեթևադիր։ Ինչ էլ պնդեն ոմանք, Յեմինգուեյն այդ վեպը հղացել է ոչ Միլանում։ Նա չափազանց զբաղված էր այլ գոր-



ծով եւ չէր կարող մտածել գրականության մասին»։ Այդժամ Ամրի Սերանո Վիլարդը նկատում է, որ նա չպետք է ամաչի, եթե Յեմինգուեյին ներշնչել է այդ ցնցող կերպարը։ Գրողը երբեք չի եղել առանձնապես քնքուշ իր հերոսներին հետ։ Չէ՞ որ Բեթթին Բարբլին իսկապես տարբերվում է իրենց խոստումներին անհավատարիմ այդ բազմաթիվ կանանցից։ Բայց Ազնեսա Ֆոն Կուրովսկին պարփակվեց լուրջության մեջ։ Թող իրեն հանգիստ թողնեն։ Նա ստիպված եղավ փախչել Կի Ուեստից, որպեսզի ազատվի ծանձրալի զբոսաշրջիկներից, որոնք, այցելելով գրողի տուն-թանգարանը, պահանջում էին տոմսի գնով տեսնել նաեւ «Յեմինգուեյի հարսնացուին»։ Ի՞նչ է նրա անունը։ «Ախ, այո, Բեթթին Բարբլի»։ Յեմինգուեյի ստեղծագործությամբ նկարահանվեց երկու կինոնկար (1932 թվականին Գարի Կուպերի եւ Յելեն Դայեսի մասնակցությամբ), որոնք վերակենդանացրին Ազնեսայի հիշողությունները։

1984 թվականի նոյեմբերի 25-ին Ազնեսա Ֆոն Կուրովսկին վախճանվում է։ Թաղմանը վեց ժովային հետեւակայիններ նրան վերջին պատիվն են տալիս՝ որպես նշան ճանաչման «Նրա անգնահատելի ծառայությունների, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Իտալիային նրա նվիրվածության»։ Մեջքերում, որին Յեմինգուեյը, անշուշտ, առանց հապաղելու հավանություն կտար։

Թարգմանությունը՝
Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ



Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

Արցախյան քառյակներ՝
գրված Գյումրիում

Պատերազմի հետքը հիմա՝ ցավի բռնցք
եւ վերքերում շրջագայող մի կույր ասուպ.-
ինչ խոսում ենք՝ մեր չասածը ցավն է ասում,
ինչ լռում ենք՝ վերհանվածը անհաճ մի սուր:

Բառի աշխարհը մի առաքյալ է, անսպառ աղբյուր,
մեծության հունից շարժվում է դեպի սեր-ամենուրեք,
կրում էւ հարված, եւ տանջանք, եւ բռն,
բայց մի սեզ համբույր
ամբողջն հատուցում եւ ընծայում է
աստվածային բերք:

Մինչ քո վարսերը՝ գիշերներ բախտի, հոսում են լույսի
լապտերի միջով՝ շնչավորելով խորանն իմ ցավի,
աղոթք է սերը, որն հավաքում են շուրթերով ուսից,
ծեռքից, ստինքից՝ լույս հաղորդելով
քանդակվող կավին...

Տողի սենյակից մտնում են հիմա այլ տողի սրահ.
դրված են պատերն իմ եւ իմ միջեւ, ոչ թե՛ տողերի,
ոգու բեռեղից ինձ հանող ծայն է ճանապարհը այս,
ուր արծիվներն են սլանում՝ կախված այգի շողերից...

Ապաշխարության հրեղեն քարից
արյան կաթիլն է բուսնում՝ հանց կակաչ,
հիշողությունը՝ օղեղեն պարիսպ,
մահվան խորհուրդն է նրա տակ պառկած:

Հայոց բարկ ոգին մարտավարում է երկինքներից վեր,
Աստծո լույսի մեջ վերածնվելով տեսում է համառ,
խրամատները արծվի թևերին բարձրանում են վեր՝
ճամփա հարթելով ժամանակի
նոր հարության համար...

Կարծես սեւագիր թերթ է տերեւը
կամ դիպվածի հետք,
համբույրից առաջ ցայտած ժպիտ է, թարտացող լույս,
հղացման դուռ է՝ բացվում է դեպի կյանքի արահետ,
միջաստեղային խոհեր կամրջող տիեզերքի հույս...

Բառերը խորքից լույս են արծակում եւ իրենք չկան,
ապրում են մեր մեջ՝ հանց ամբերույթ
մի նոր մոլորակ,
եւ ջերմացնում են մեզ, որպես մի այլ աշխարհի վկա,
եւ կյանք ստանում աստղացույթերով
մեր շուրջ բոլորած:

Եվ հայրս լույսի կաթիլ է ընպում,
սնվում ավիշով Մեծ հիշողության,
երկնքի ճյուղից քաղում է պտուղ՝
ապրելով որպես հոգու ավազան:

Ճանապարհների հայացքում ճերմակ
քամին համբուրեց պտուկներ կարմիր.
կարծես թե լինի երկնային վերմակ
մասրենուն հավող ծաղկավոր քամին:

Ի՞նչ տարերք, եթե այն կշռվում է մծարով ոգու,
ծնվող բառերին փոխարինում է արարող լույսը,
սիրտ մի շշուկ հայացքի ծովն է արագ փոթորկում,
եղած ու չեղած չափանիշներից հոգին միշտ դուրս է:

Բառերը շուրթից կախվում են,
ինչպես խոլ կախաղանից,
իսկ նրանցից դուրս կյանքն ուխտավոր է,
Տեր, անհնար է սերն հանգավորել...
Փշե պսակ է հյուսվում աշխարհի զոհասեղանին...

Երբ ճշմարտության դեմքի մի մասը
երկրում է, մյուսն՝ անդրաշխարհում,
հասնում ենք ոգո՞ւն, թե՞ այն անհա՛ս է,
վերածնվո՞ւմ ենք, թե՞ ապաշխարհում:

«Յեռացած խաղաղությունը մոտենա...»

1988-ի փետրվարը...ազգային
զարթոնքի աստեղային ժամանակը,
ինքնագիտակցության տիրատուր վե-
հությամբ դարձրել սեփական արմատ-
ներին, պատմությանը, հաղթանակնե-
րին...

...Հիմա, կորուստների սրտմաշու-
քով խուսափում ենք 88-ի...աչքերին
նայելուց, բայցեւ ուժերի գերլարումով
փորձում ոտքի կանգնել՝ մեր ժողովու-
րի ինքնապաշտպանության եւ ինքնա-
նորոգման անխորտակ ուժին ապավի-
նելով...

Իսկ դիմակայման հազարամյակ-
ների պատմության էջերը, ցավի ու
տառապանքի մարմնացում լինելով,
հանդերձ՝ մեզանում կորոզային են պո-
եզիայում, արծակում, երաժշտության,
քանդակագործության, նկարչության,
արվեստի ու արհեստի բոլոր ելեւեղե-
րում, կենցաղի բոլոր տարրերում՝ տա-
րագից մինչ ուտեստ ու սովորություն:

Շարունակում ենք դրանց մեջ ապ-
րել, դրանք կրելով՝ որպես եւ ճակա-
տագիր, եւ որպես չեռացող անցյալ
ու աննահանջ երազանք:

...«Ծիծեռնակը բույն է շինում»,
«Կռուկ, մեր աշխարհին խապրիկ մը
չունիս», «Ափ մը մոխիր, Հայրենի
տուն», «Տեսնեմ Անին ու նոր մեռ-
նեմ...» ...Սեզնից յուրաքանչյուրը, հա-
վատացած են, կշարունակի շարքը:
Այդ ամենից առաջ էր քերթողահոր ող-
բը, իսկ դրան էլ նախորդած կլինեին
նմանատիպ, մեր ժամանակի լեզվով
ասած՝ ուղեծրներ, առաջնորդողներ,
հայտարարություններ: Այս ամենը փո-
խանցվել է մեզ՝ թե՛ գրավոր ու բանա-
վոր, թե՛ արյամբ:

Ինքնապաշտպանության բնագծով
չէ, այլ դարերի փորձությունն ապրած,
բոլոր անգամ կենաց ու մահու պայքա-
րում թրծվածի պարտադրանքով, որ
կարողանանք մեր ոչ սովորական ճա-
կատագրով գլուխ հանել մեզ ամեն
կողմից շրջապատած գելի ոհմակի
հարձակումներից, կարողանանք աշ-
խարհի մեծ գիշատիչ- խաղացողների
հետ մեր խաղն այնպես խաղալ, որ
տանուլ տվածը լինի աննշան, դյու-
րին վերականգնվող: Ու նաեւ կարո-
ղանանք հպարտությամբ ամեն ան-
գամ վկայակոչել մեր պատմության
նոր ու հաղթական դասերը՝ անցյալի
սխալները չկրկնելու վճռականու-
թյամբ:

Հիմա՝ դժվարին մեր օրերում, չգի-
տեմ, 44-օրյա պատերազմը մեր թույլ
տված սխալների ո՞ր վտանգավոր
արանքով է սողոսկել, բայց որ դա եղել
է քայլ առ քայլ՝ բոլորիս թողտվությամբ
ու աչքի առաջ, անհնար է ժխտել: Կր-
կին պատերազմն իր արհավիրքով
ավերել է եւ մեր երկիրը, եւ մեր հոգին:
Յենց մեր լուսեղեն զոհյալների մասին
է Մեծ Լուռեցին ասել՝ «Ինչքան ծաղիկ
պիտի բուսներ, որ չբուսավ էս հո-
ղին...»:

Խոստովանենք. դարեր շարունակ
կռվախնձոր դարձած հայ Արցախը,
հենց մեր թուլությամբ է դարձել կռ-
վախնձոր. ուժեղի մոտ միշտ էլ թույլն է
մեղավոր: Աշխարհի քարտեզը՝ զորո-
րինակ, փոքր ինչ եթե թերթենք այսօր
ինձն ուժի դիրքերից մեզ կամք թելադ-
րող երկրների պատմության էջերը,
անշուշտ, կերեւան դրանց արյուն-
ռուշտ երախները եւ այդ ամենի ֆոնին
էլ՝ առավել ցավազին սեփական
պատմության դառը դասերի հանդեպ
մեր աչք փակելը: Իսկ դա մեզ համար
նույնն է, ինչ՝ կամովին անապատի սա-
մունին հանձնվելը:

Բայց... փառք մեր զինվորին, մենք
կանք, հենց նրա հայրենապաշտ կեր-



պարով ենք ներկա եւ մեր անցյալում
եւ... ներկայում:

Երբ ինքնահաղթահարմամբ օրա-
նսխելի անհաշտությունից՝ մեր հավա-
քական ուժն ու միասնությունն ենք
վեր դասում, հաջողությունն անխու-
սափ է: Բայց ինչու միայն օրհասի պա-
հին ենք գիտակցում, որ նահանջի
տեղ չունենք: Ախր, գիտենք, որ էլ տեղ
չունենք նոր կիլիկիաների, նոր մա-
րաշների, նոր հաճընների, նոր մարա-
ղաների, հիմա էլ՝ կսկիծով ավելաց-
նում ենք՝ նոր հաղթությունների, նոր կոլ-
սականների ու միջնականների...

...Անցյալ դարի 90-ականների պա-
տերազմում պարզերես հասանք
Արաքսի ափը, արժանացանք նրա
օրհանգիսն ու շատ չանցած կրկին
հանձնվեցինք աշխարհի խարդախնե-
րի մեզ հրանցված փափուկ բարձի
նիրհին, մեր հոգում լռեցնելով ինքնա-
պաշտպանության այն հզոր ծայնը, որ
անլռելի զանգակատան պես մշտա-
պես զգոնության ու սեփական ուժին
ապավինելու կոչ է:

Այդ ինչպես եղավ, որ ազատության
դրոշ պարզած մի անգն ու անպաշտ-
պան ժողովուրդ կարողացավ շուն
թուրքին հալածել մեր հայրենիքից,
սահման ու ապագա նախանշել:

Աստծուն անչափ հաճելի էր նայել
մեզ վրա, քանզի ազատությունն աստ-
վածային սկիզբ ու զորություն ունի: Եվ
հիմա հոշոտված իմ հայրենիքի փրկու-
թյան համար աղոթքս ուզում եմ Տրիո-
շը լսելի դառնա՝ «(Ընդհատված ծայնը
ողջունիդ լսվի), (Յեռացած խաղաղու-
թյունը մոտենա)» Նարեկացու այս տո-
ղերին խառնված՝ եւ շարունակվի
Դավթի սաղմոսով. «Տեր, մարդուն մի
վերադարձրու տառապանքի եւ թող
պակասեն մեղավորները երկրից»:

... «Արցախ, ինչու դու եղար իմ
հայրենիքը», իր բնօրրանը շատ սիրե-
լուց է այսպես տրտմազին խոսել ար-
ծակագիր Մաքսիմ Հովհաննիսյանը:
Սիրտ մրմռացնող խոստովանություն
է, բայցեւ որդիաբար նրան տեր կանգ-
նելու եւ նրանով գորանալու չնահան-

ջող փափագ: Եվ իր այս խոսքի շառա-
վիղը գրողը փորձել է խառնել գրչա-
կից ու բարեկամ Հրանտ Մաթևոսյանի
տեսլականին:

Այսօր հեռավոր թվացող 1995-ին,
«ԼՂ Հանրապետություն» թերթի մար-
տի 21-ի համարում տպագրված հար-
ցագրույցում մեր օրերի համար մի
շարք ուշագրավ շեշտադրումներ կան:
Հատկանշական է, որ Մ. Հովհան-
նիսյանի վարած հարցազրույցը կայա-
ցել էր 1989-ին, շարժման երկրորդ տա-
րում, երբ ամեն ինչ դեռ խմոր էր, իսկ
մեր քաղցր հացը դեռ առջեւում էր՝
հաղթանակով, ազատությամբ շա-
ղախված:

Սիւս Մաթևոսյանի խոսքից պա-
տառիկներ. «Ղարաբաղը իմ մեծ հաս-
տատունն է հայրենիքի: Ղարաբաղի
կորուստը՝ համարի, որ ուղղակի հայ-
րենիքի կորուստ է լինելու, շատ դա-
ժան բան են ասում, բայց այդպես է:
Բզկտված, հոշոտված այս վիճակից
մենք դուրս կգանք, մեր վերքերը կլի-
զենք, կամոքենք մեզ եւ կզմանք մեր
ճամփան: Թունանյանը մի հեքիաթ ու-
նի, երեխայությանս տարիներին իմ
ամենազսիրած գործը՝ Թունանյանից՝
այդ հեքիաթն էր: Խելոք եղբայրը հի-
մար եղբորը գրկում է: Ուրեմն՝ մենք
համայն ազգերի համար պատմության
մեջ հիմար այդ եղբայրն ենք լինելու,
եթե մեզ զրկենք Ղարաբաղից»:

Հ.Մաթևոսյանի խոսքով մարդու,
անհատի՝ հաստատուն, աներեր պահ-
վածքն էլ ժառանգություն է, իսկ նման
ժառանգություն արցախցիներս ստա-
ցել ենք մեր տոկուն ու հայրենասեր
նախնիներից: Եվ նաեւ հավատարիմ
այդ ուխտին 44-օրյա պատերազմից
ավերված մեր շենքի բնակիչները վե-
րադառնում են իրենց արդեն իսկ ավե-
րակներից ազատված տները, որ ծի-
ծեռնակի նոր բույնի պատմությունը
նոր շարունակություն ունենա...

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից



Մասիս ԳՐԻԳՈՐՅԱՆ



(1986-1991 թթ.` դեկան, 1990 թ.-ից` արոՖեսոր):

Մասիս Գրիգորյանը աշխատել է գեղանկարչության եւ գրաֆիկայի ասպարեզներում։ Նրա մեծածավալ թեմատիկ նկարներն աչքի են ընկնում բազմապլանային խոհափիլիսոփայական բովանդակությամբ։ «*Ոգնի*» ամսագրի համար կատարել է մի շարք ծաղրանկարներ։ Գործերից են՝ «*Առաջին դասը*» (1967 թ.), «*Յեռավոր ծայներ*» (1973 թ.), «*Չավատարմություն*» (1978 թ.), «*Կեսօր*» (1979 թ.), «*Անտարբերություն*» (2000 թ.), «*Չերթափոխ*» (կոմպոզիցիա՝ նվիրված Մարտիրոս Սարյանին, 2003 թ.), «*Չարցի լուծում*» (կոմպոզիցիա՝ նվիրված Չայոց մեծ եղեռնին, 2003 թ.):

Ստեղծել է արդիական խնդիրներ արծարծող կոմպոզիցիաներ եւ նատյուրմորտներ, որոնց բնորոշ են պայմանական խորհրդանշական արտահայտչաձեւերը։ Ունեցել է անհատական ցուցահանդեսներ Երեւանում (1996 թ.), Մոսկվայում (1999 թ.), Գյումրիում (2001 թ.): 1987 թ.-ից եղել է ԽՍՀՄ նկարիչների միության անդամ, 1968 թվականից՝ ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ։ 1962 թվականից Չայաստանի նկարիչների միության անդամ է։ 1970-1990-ական թթ. Մասիս Գրիգորյանը նաեւ համդիսացել է Չայաստանի մշակույթի նախարարության Գեղարվեստական հանձնաժողովի նախագահ։

Մասիս Գրիգորյանի ստեղծագործությունները պահվում են Չայաստանի ազգային պատկերասրահում, Մոսկվայի Տրետյակովյան եւ Պատմության թանգարաններում, մասնավոր հավաքածուներում։ 1990 թ. արժանացել է Չայաստանի ժողովրդական նկարչի կոչման։

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն իր վշտակցությունն է հայտնում Մասիս Գրիգորյանի ընտանիքի անդամներին, մերձավորներին, ընկերներին եւ նրա արվեստի երկրպագուներին։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «*Բուժականի Գ. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (23 դասաժամ), երաժշտության (2 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի քափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են *փետրվար 23-ից մինչեւ մարտի 9-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից*։

Մրցույթը տեղի կունենա *մարտի 11-ին՝ ժամը 14:00-ին*, ՀՀ Կոտայքի մարզի Բուժականի Գ. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գ. Բուժական, 5-րդ փ., շ. 8։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 43-06-38, (098) 04-46-62 հեռախոսահամարներով։

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խորը վշտով տեղեկացնում է, որ փետրվարի 18-ին 92 տարեկանում կյանքից հեռացել է ՀՀ ժողովրդական նկարիչ, գեղանկարիչ **Մասիս Գրիգորյանը**։

Մասիս Գրիգորյանը ծնվել է 1929 թ. սեպտեմբերի 4-ին, Լենինականում (այժմ՝ Գյումրի)։ 1945 թ. ավարտել է տեղի նկարչական դպրոցը, 1960 թ.-ին՝ Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտը, 1974 թ.-ին սովորել է Լենինգրադի (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Գեղարվեստի ակադեմիայում։ 1963 թվականից դասավանդել է Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիայում

Ա Ձ Դ

Մարտին ԵՐԻՑՅԱՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խոր վշտով տեղեկացնում է, որ փետրվարի 20-ին 90 տարեկանում կյանքից հեռացել է ջութակահար, վիմագործ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի արոՖեսոր Մարտին Շահենի Երիցյանը։

Մարտին Երիցյանը ծնվել է 1932 թվականի հունվարի 31-ին, Երեւանում։ Երաժշտական կրթությունը ստացել է նախ Երեւանի Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցում, Երեւանի երաժշտական ուսումնարանում, ապա ավարտել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան, այնուհետեւ՝ ասպիրանտուրան եւ ընդունվել Չայաստանի ֆիլիհարմոնիայի կվարտետ՝ որպես երկրորդ ջութակահար։ Կվարտետի կազմով 1969 թվականին Բյուրսելում մասնակցել է Եղիսաբեթ թագուհու անվան երաժշտական միջազգային մրցույթին։

Հյուրախաղերով հանդես է եկել Ֆրանսիայում, Իտալիայում, Ռուսաստանում եւ այլ երկրներում։ Դասավանդել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կվարտետի ամբիոնում (արոՖեսոր)։ 1985 թվականին մեկնել է Զեխտսլովակիա, որտեղ աշխատել է հայտնի վիմագործ Վլադիմիր Պիլարժի հետ։

Մարտին Երիցյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների ու դիպլոմների, այդ թվում՝ Իտալիայի Ստրադիվարիուսի անվան միջազգային մրցույթի մրցանակի (1980 թ.), «*Աշխատանքային վաստակի համար*» մեդալի (2020 թ.)։

Նա ստեղծել է շուրջ 500 ջութակ, 200 ալտ, 29 թավջութակ, 12 կիթառ, 1 ուղ, 26 քանոն, 15 քեմանի, 7 թավ քեմանի եւ այլն։

Մարտին Երիցյանի հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա փետրվարի 22-ին՝ ժամը 18:00-ին, Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում, վերջին հրաժեշտը՝ փետրվարի 23-ին՝ ժամը 13:00-ին, նույն վայրից։

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն իր վշտակցությունն է հայտնում Մարտին Երիցյանի ընտանիքի անդամներին, մերձավորներին, ընկերներին եւ նրա արվեստի երկրպագուներին։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի հ. 181 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են *մինչեւ մարտի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից*։

Մրցույթը տեղի կունենա *մարտի 11-ին՝ ժամը 15:00-ին*, Երեւանի հ. 181 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Բաբաջանյան 4։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 72-98-24 հեռախոսահամարով։



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը խոր վշտով տեղեկացնում է, որ փետրվարի 20-ին 90 տարեկանում կյանքից հեռացել է ջութակահար, վիմագործ, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կվարտետի կազմով 1969 թվականին Բյուրսելում մասնակցել է Եղիսաբեթ թագուհու անվան երաժշտական միջազգային մրցույթին։

Հյուրախաղերով հանդես է եկել Ֆրանսիայում, Իտալիայում, Ռուսաստանում եւ այլ երկրներում։ Դասավանդել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կվարտետի ամբիոնում (արոՖեսոր)։ 1985 թվականին մեկնել է Զեխտսլովակիա, որտեղ աշխատել է հայտնի վիմագործ Վլադիմիր Պիլարժի հետ։

Մարտին Երիցյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների ու դիպլոմների, այդ թվում՝ Իտալիայի Ստրադիվարիուսի անվան միջազգային մրցույթի մրցանակի (1980 թ.), «*Աշխատանքային վաստակի համար*» մեդալի (2020 թ.)։

Նա ստեղծել է շուրջ 500 ջութակ, 200 ալտ, 29 թավջութակ, 12 կիթառ, 1 ուղ, 26 քանոն, 15 քեմանի, 7 թավ քեմանի եւ այլն։

Մարտին Երիցյանի հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա փետրվարի 22-ին՝ ժամը 18:00-ին, Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում, վերջին հրաժեշտը՝ փետրվարի 23-ին՝ ժամը 13:00-ին, նույն վայրից։

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունն իր վշտակցությունն է հայտնում Մարտին Երիցյանի ընտանիքի անդամներին, մերձավորներին, ընկերներին եւ նրա արվեստի երկրպագուներին։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի Ստ. Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոց*» ՊՈԱԿ-ի քիմիայի (7 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են *մինչեւ մարտի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից*։

Մրցույթը տեղի կունենա *մարտի 14-ին՝ ժամը 13:30-ին*, Երեւանի Ստ. Շահումյանի անվան հ. 1 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Մաշտոցի պողոտա 33։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 53-32-23 հեռախոսահամարով։

Հայտարարություն

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն՝ «*Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ «*Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար։

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը,
- 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր)։ Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է
 - 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի ամուսնով,
 - 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
 - 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
 - 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թրքային եւ էյեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,
 - 5) ինքնակենսագրություն։
- Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առեռնն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ։

Փաստաթղթերն ընդունվում են *փետրվարի 23-ից մարտի 17-ը* ներառյալ, «*Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Արմավիր, Երեւանյան 36։

Մրցույթը տեղի կունենա *մարտի 25-ին՝ ժամը 13:00-ին*, Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջում։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0237) 2-22-92։ էլեկտրոնային հասցեն՝ armavir-75@mail.ru:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «*Արտեմիի հ. 1 միջնակարգ դպրոց*» ՊՈԱԿ-ի ֆիզիկոսի (31 դասաժամ), ֆիզիկայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են *մինչեւ մարտի 10-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային*

Բաժանորդագրվի՛ր, կարդա՛ «Կրթություն»

Օվկիանոսից այն կողմ՝ հեռավոր Ամերիկայում, օվկիանոսից այս կողմ՝ Եվրոպայում, հյուսիսում՝ Ռուսաստանում, հարավում՝ արաբական երկրներում, Ավստրալիայում, թե ամենուր, յուրաքանչյուր քաղաքացի ունի իր թերթը՝ մանավանդ, եթե այն մասնագիտական է եւ ուղղված է հենց իրեն... Հայաստանում, սիրելի ընթերցող, այդ թերթը քեզ համար «Կրթություն»-ն է՝ մեզանում պահպանված թերեւս միակ մասնագիտական թերթը, 1932 թվականից ի վեր («Կուլտուրական ֆրոնտ», «Սովետական դպրոց», «Դպրություն», «Դպրոց», 1997-ից՝ «Կրթություն» անվանումով):

Գիտե՞ս, սիրելի ընթերցող, շատ դժվար է լինել մասնագիտական պարբերական ու միաժամանակ մնալ հանրամատչելի, հետաքրքիր լինել եւ ուսուցչի, մանկավարժի, եւ նաեւ ուսանողի, ծնողի, բոլորի համար: Դա դեռ ոչինչ. արհեստավարժ եղար՝ այդ խնդիրը կուծես: Բայց այսօր, եթե որեւէ կուսակցության, որեւէ քաղաքական կամ գործարար խմբի խոսափողը չես ու չունես այդպիսիք՝ իբրեւ հովանավոր, պիտի լուծես նաեւ տնտեսական խնդիր: Օրաթերթ չես, հրատապ լրատվություն չես հրապարակելու, «դեղին» մամուլին հետեւելով՝ ընթերցողներ որսալու սկզբունքը խորթ է քեզ համար, որովհետեւ հայոց հազարամյա դպրության ու այսօրվա դպրոցի քարոզիչն ես, ու խոսքդ պիտի լինի լուսավոր, անքեմ, դրականը դրվատող ու հասարակություն կրթող... ոչ թե նրան զավեշտով, հերյուրանքով գայթակղող:

Սիրելի ընթերցող, ինչ նախասիրություններ էլ որ ունենաս, համոզված եղիր, «Կրթությունը» անարատ հոգեւոր սնունդ է տալու Քեզ, եւ ո՛չ միայն մանկավարժական թեմաներով: Իսկ եթե ուզում ես, որ մեր հանդիպումները լինեն շարունակական եւ գոյատեւի Քո՝ թերթը՝ մի օր լավ, մի օր գերազանց, մի օր էլ պակաս կամ թերի, բայց Քո՝ թերթը, որ ամեն չորեքշաբթի հայտնվում է Քո՝ ձեռքերում, եւ որի ճակատագիրը դարձյալ Քո՝ ձեռքերում է ուղղակիորեն, բաժանորդագրվի՛ր, կարդա՛... Սիրի՛ր Քո թերթը, որ այն օրավոր դառնա ավելի հետաքրքիր, փոխանցի՛ր այն Քո հարեւանին, բարեկամին, ընկերոջը, հորդորի՛ր, որ կարդա... Մեզ սնուցողը Դու ես՝ եւ բարոյապես, եւ նյութապես: Քո՝ բաժանորդագրությամբ, կրպակներից Քո՝ գնումներով, անհրաժեշտ տպաքանակ ապահովելով՝ Դու հնարավորություն կտաս, որ «Կրթությունը» գոյատեւի, դառնա փնտրված ու սիրված թերթ... Բաժանորդագրվի՛ր, գնի՛ր, կարդա՛ «Կրթություն», միշտ ունեցի՛ր Քո թերթը...

* * *

«Կրթություն» կարելի է բաժանորդագրվել «Հայփոստի» եւ «Հայմամուլի» բոլոր տարածքային մասնաճյուղերում, բաժանորդագրություն կազմակերպող այլ գործակալություններում:

Մեկ տարվա բաժանորդագրության համար պետք է վճարել **10400** դրամ եւ ստանալ բոլոր **52** համարները:

Վեց ամսվա բաժանորդագրական գինը **5200** դրամ է (**26** համարի համար):

Երեք ամիսների բաժանորդագրության համար պետք է վճարել **2600** դրամ (համապատասխանաբար կստանաք **13** համար):

Այլ մանրամասնությունների համար կարող եք դիմել «Հայփոստի» (51-45-47), «Հայմամուլի» (45-82-00) եւ այլ գործակալությունների այն մասնաճյուղերին, որտեղ կատարում եք բաժանորդագրությունը:



ISSN 1829-2593



9 771829 259009

ՀԻՄՆԱԴԻՐ՝
ՀՀ ԿԳՄՍՆ
«Կրթություն» թերթի
խմբագրություն» ՓԲԸ

Գրանցման վկայական՝ 01Ս-049349,
Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. (043) 57 49 56, (043) 57 49 51

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»
հրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 4 տպագրական մամուլ:
22.02.2022թ.
Գինը՝ 200 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՍՅԱՆ